Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

223-40
235
Ин-16

ПК з. 243 т. 3.000.000

2 7 OCT 2009

ԲՆԱԳԻՐՆԵՐ ԵՒ ՀԵՏԱՋՈՏՈՒԹԻՒՆՆԵՐ. ԳԻՐՔ Գ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԷՋՄԻԱԾՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ

235 աշխ.
Ա - 16

ԱԲՐԱՀԱՄՈՒ ԽՈՍՏՈՎԱՆՈՂԻ ՎԿԱՅՔ ԱՐԵԻԵԼԻՑ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ ՅԱՈՐԱԿԱՆԷՆ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ
ԳԱԼՈՒՍՏ ՏԻՐ ՄԿՐՏՉԵԱՆԻ 1897—1900

ԷՋՄԻԱԾԻՆ
ՏՊԱՐԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
1921

8052

PRINTED IN TURKEY

- .01. 2013

A. DEVEJIAN LIBRARY
NEW YORK
Ա. ՏԵՎԵՃԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Հրատարակուած է Էջմիածնի Գիտական Ինստիտուտի առաջնորդ

Նոյեմբերի, 1921 թ. Էջմիածին։

Գիտնական Քարտուղար՝ Ե. Տէր-Միքայելեան.

223
40

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ա.

Հայ բանասէրներից շատերը գիտեն, որ հանգուցեալ հայագէտ Գալուստ Տէր Միքայէլեանը ձեռնարկել էր տպագրելու Աբբահամ Խոսրովանոդի գործը, բայց տարբերը անցան և ի լոյս չածուեց շատերից [1]) անհամբեր սպասած այդ աշխատութիւնը։ Մինչդեռ այդ գիրքը միանգամայն տպագրուած պատրաստ էր Գլխոց, Սուրբ գրքից առնուած վկայութեանց, յատուկ անուանց ցանկերով և վրիպակների ցուցմունքով, ընդամենը 248 էջից բաղկացած։

Պակասում էին գրքի Տիտղրլատը և անհրաժեշտ Յառաջաբանը։ Յառաջաբանը գրելու համար հանգուցեալի թղթերում տեսակները համարեա լրիւ են, բայց իրրև ծանօթութիւններ և նկատողու-

---

1) Աբ. Խոսր. վաղուց պատրաստ էր տպագրութեան։ 1896 թ. Աբրահամը էջ 285 ծանուցանում է, որ ԳՏՄ ձեռնարկել է Աբ. Խ-ի նոր գտնուածների հրատարակութեան։ Հանգուցեալի մատենագրներից տասացած նամակներից տեղեկանում ենք, որ գործը պատրաստ էր աւելի կանուխ։ Այդ թղթերի մէջ 1894 թ. Մարտի 13 ին Ն. Մառը Պետերբուրգից գրում է. «բայց եթէ մինչև անգամ տղայքին թանդագին մատենագիրների նորագիւտ կտորները հրատարակելիս խաչընդոտներին էք հանդիպում, յօժարակամ ընդունելութեան փոխարէն, Փաւստոսի և Աբբահամ Խոսրովանոդի գրուածքները արգելքներին են պատաղարտուած և յետաձգութեանը. դա նշանակում է հայերի համար շատ վատ բան»։ Անկարելիած են կաթուղիկոսարանի այդ ժամանակի գործողութիւնները։

Վեհանակի միաբաններից 1896 թ. նամակներով խնդրում են շտապեցնել գործի հրատարակութիւնը. իսկ 1909 թ. Ն. Բիւզանդացին և Տ. Ն. Ակինեանը խնդրում են արդէն տպագրածից մի մի օրինակ։

ԳՏՄ 1897 թւի Ապրիլի 26-ին ձեռագրերը ներկայացրել է Թիֆլիզի ցենզորին տպագրելու իրաւունք ստանալու։ Ցենզորը այդ 2-ը պահել է մօտ երեք տարի, մինչև 1899 թ. Դեկտեմբերի 17-ը և տպա թոյլատրել։ Ծանրածանր արժանացել է բացառիկ արագ թոյլատուութեան. ցենզորն ասացել է 1900 թ. Սեպտեմբերի 12-ին՝ և նոյն թ. Դեկտեմբերի 12-ին արդէն արտօնել է տպագրելու։

թիւններ, բացառութեամբ Աբրահամ Խոսրովանդղի կենսագրական Ուրուագծին, որ նա գրել է հինգ ու կէս միաձայլ թերթի կէս էջի վրայ։ Այդ նիւթերն են. ա) Տպագրութեան համար պատրաստած իւր ձեռագրերը կրկնակի արտագրութիւններով, իսկականը կատարած իւր ձեռքով և ցենզօրին ներկայացնելու համար արտագրել տւած կրկնակը, բ) իւր ձեռքի տակ տպագրւած անկազմ մի օրինակը, որի լուսանցներում ունէ է. նախ՝ ցուցմունք ABCDEPHSWF լատինական տառերի համապատասխանող ՋՋ-ի և տպագրների անուններով և երկրորդ բազմաթիւ նոր ծանօթութիւններ և վկայութիւններ, որ նկատել և աւելցրել է տպագրութիւնը կատարելուց յետոյ։

Ահա այդ նիւթերի վրայ հիմնւած և մեր կողմից թերթն լրացումներ կատարելով, գրում ենք Յառաջաբանը և կազմում Տիտղիլաթը։

Մեր առջև դրած գիրքը հայ հին ձեռագրական գրականութեան մէջ ոչ ընդհանուր վերնագիր ունի և ոչ էլ առանձին հատորի մէջ է ամփոփւած, այլ ԳՏՄ, հիմնւած պատմական-գրական տւեալների վրայ, էջմիածնի ձեռագիր ճառընտիրներից արտագրել և միացրել է իւր կազմած գրքերի մէջ տաս հիմնական և երեք յաւելւած գլուխներ, համաձեռելով այդ Աբրահամ Խոսրովանդղի ձեռքով տարբերներից թարգմանած վարքագրական մի մեծ գրքի մնացորդ։

Առաջին ժ գլուխները ԳՏՄ-ի արտագրութեան մէջ ընդհանուր վերնագիրը չունին, իսկ շարունակութիւնն ունի այս տիտղլաթը. էջ առաջին—Յաւելւած Աբրահամու Խոսրովանդղի, 1900 Օգոստ. էջմիածին։

էջ երկրորդ—Աբրահամու Խոսրովանդղի թարգմանութիւնք յատուկանէն. Ակեփսիմոս, Այիթալա և Յովսէփ—։

Այս հիման վրայ և հետևեալում յիշատակելիք գրական ուեալներն ի նկատի ունենալով, տիտղլաթը մենք կազմում ենք այսպէս.

Աբրահամու Խոսրովանդղի Թարգմանութիւնք յատուկանէն և Յաւելւած.

Աջխատասիրութեամբ Գալուստ Տէր Մկրտչեանի 1897—1900։

Բ.

ԳՏՄ Աբրահամի թարգմանութիւնը մի գրքի մէջ ամփո-

փելու համար օգտագործել է այս նիւթերը, իւր իսկ ցուցակով։

A. n 936 (3) (Կար n 916, 3).

B. n 936 (6) (Կար n 919, 6).

C. n 671 Գ. Յուցակ.

D. n 130 Գ. Յուցակ, երկաթագիր. էջ 44 v—45 v.

P. և E. Եփրեմ Ասորի տպ. հատ. Դ. (Վենետ. 1836, էջ 150-152).

H. Հրաշափառ Տօնական n 940 (7) (Կար n 920, 7)

S. Սոփերք հատ. Ի.

W. Վարք և Վկայաբ.

W 2. Ջ «մի օրինն», «այլ օրինակ» Վենետկի հրատարկութեան.

F. 914, 3 (Կար. 894, 3)։

Գ.

Համառօտ տեղեկութիւններ տանք վերոյիշեալ ՋՋ-ի մասին օգտւելով նաև Ձեռագրերի մեր անտիպ ընդարձակ ցուցակից։

A. էջմ Մատ. հ. 936 (3), Մայր Յուցակի հ. 916 (3), էջ 85-88. և ԳՏՄ՝ Ագաթանգեղոսի աղբիւրներից, Վաղարշապատ. 1890 էջ 42-51։ Վերջինի մէջ գտնում ենք Ջ-ի արտաքին նկարագրութիւնը և կարևոր յիշատակարանները, իսկ բովանդակութիւնը առաջ է բերւած Մայր Յուցակի մէջ։ Համմ. նաև ԳՏՄ Դրիգոր Մանաճիհր Ռաժիկ, Արարատ 1901, էջ 468—74 և արտատպ. էջ 12, § 6։

Այս Ջ-ն է ճառընտիր, կաշեկազմ, 52×32., հատ թղթի վրայ գրւած, միջին երկաթագրով, երկսիւն, 38-42 տողերով, անթեական, մօտ. ԺԲ դարուց, թերի մասերով, կարկատւած և վերսաին կազմւած։ Ջ-ը ստացել է՝ Ռուբէն կաթողիկոսն քահանայ. գրութեան տեղն է՝ Սուրբ Գրիգոր, «ամենայն հաւանականութեամբ Սաղմոսավանք», գրիչն է՝ Յովհաննէս վանականը։ (Մանրամասն տես վերոյիշեալ տեղերը)։

Այս Ջ-իցն են առնւած տպագրի գլ. Ա, Բ, Գ, Ե, Է, Ը, Թ և Ժ, ասել է ամբողջը, առանց Յաւելւածի։

B. էջմ. Մատ. հ 939 (6), Մայր Ցուցակի հ. 916 (6), էջ 99—102 և ԳՏՄ Ագաթ. Աղբիւր. էջ 51—60, Արարատ 1901, 468-74։

Այս Ջ-ը նոյնպէս ճառընտիր է, ամեն բանով նման է նախընթաց օրինակին. կաշեկազմ, հատ թուղթ, նախկինի մեծութեամբ, գրւած նոյնպէս միջին երկաթագրով, 12-րդ դարու վեր-

Ջերից, հաւանական 1185–1188 թ.։ Այդ է ԳՏՄ-ի կարծիքը՝ հիմնուած զանազան ուսումնասիրի վրայ (Տես յ. ա. 57–59) Սաացողն է՝ Մարկոս, գրիչները-նոյն Մարկոսը և եղբայրը Մխիթար, Սաղմոսաւանքի անապատում։ Սրա գրիչները Ա-ի չափ վարժ չեն։ Այս Ջ-ի մէջ են նախկինի բոլոր գլուխները՝ A և B համեմատած Տ.-ի հետ, տեսնում ենք, որ սկզբում լրիւ են, շարունակութեան մէջ թերի (տպ. էջ 52—64, 84—86)։

C. էջմ. հ. 671 Գ(էորգեան ցուցակ)։

Այս ճառընտրի նկարագրութիւնը վերցնում ենք մեր Ցուցակից։ Կաշեկազմ, մեծադիր, 47×30, հասա թուղթ, 680 թերթ, խոշոր բոլորգիր. 43 տող, երկսիւն։ Գլխաւոր յիշ. չկայ, երկրորդականները բազմաթիւ են, որոնցից երկուսը տպագրուած է Աբրահամի հրատարակութեան մէջ (տ. էջ 145, 236)։ Ժամանակ՝ մօտ ԺԳ դար։

Սաացողներն են՝ Պարոն Տուտած և Պարոնիկ Ռայիս. Պարոն Աբեան. կենակից Պարոն Տուտծի՝ Փոքր-Տիկին, որդին՝ Ներսէս. եղբայրը Խարիպշահ։ Գրիչներն են՝ Սահմենէս և Վարդան երէց՝ Թղ. 242 բ, կայ մի ոտանաւոր, նախագիծ տառերով. «Լորեցոյ Վարդանայ Գեղփերեցաց քահանայից»։

Ունի և ուրիշ անուննների յիշատակութիւն. Գրիգոր քահանայ, Ծուանկ տիկին, Վարդան, «մեծ քաւչապետն Աւետիս և սուրբ եղբայր նորա Գրիգոր», Ասպետ մխակից, են։

Թղ. 274 բ «Չհոգևոր եղբայրն մեր զԱվրան քահանայն զՅովհաննէս, զնախնի սկզբնաւորն սուրբ գլուցս, որ ի Քրիստոս վոխեցաւ»։

Այս Ջ-ում գտնում են գլ. Գ, ԺԲ և ԺԳ։

D. էջմ. հ. 1309։

Օգտւում ենք մեր Ցուցակից։ Ճառընտիր, կաշեկազմ, թուղթ, 263 թերթ, մեծադիր, 46×32, միջին երկաթագիր, երկսիւն, 46 տող. թերի ծայրերից և միջից։ Ախալցխայից էջմիածին բերւած ՀՀ-ին է, ունի այդ քաղաքի կնիքը։ Նորագոյն յիշ. բաւական են. 1615, 1624, 1820 թուերից։

Ներսէս Շնորհալու Թարգմանել ասած սուրբ Սարգսի վկայաբանութիւնը 1158 թ. գտնւում է Ջ-ում մէջ և ապացոյց է, որ այդ թւականից յետոյ է գրւել, բայց ոչ ուշ քան ԺԲ դարը։

Սաացող՝ Յովհաննէս քահանայ. եղբայրք սորին Սարգիս և Կոստանոս, գրիչ՝ Գրիգոր։

Այս Ջ-ի մէջ կայ գլ. Ա. սակայն Գալուստը չի օգտւել իւր

հրատարակութեան մէջ. որովհետև ուշ է այդ Ջ-ի բնագիրը նկատել։

E և P. Առաջինը Եփրեմ Ասորու Մատենագրութեանց Վենետիկեան հրատարակութեան Գ հատորն է, էջ 150-152, իսկ երկրորդը Պարիզի ճառընտիրը, որի մասին մեր Ցուցակից ենք տեղեկութիւն վերցնում. Մակերի ցուցակը դժբախտաբար ձեռքի տակ չկայ։

P. Cod Arm 48, ԺԲ—ԺԳ դար, թուղթ, 163 թերթ, 52×33, երկսիւն, միջին Մեսրոպեան երկաթագիր, 37 տող. Ջրի մէջ ջնասած։ Սաացողք՝ կրօնաւոր եղբայրք Մարտիրոս, Պետրոս. Կոստանդին և այլք. գրիչ՝ Յակոբ կրօնաւոր։

Թղ. 84 ա—103 բ. «Վկայութիւն բազմաց սքանչացելոց»։ Թերի սկզբից, չունի վերնագիր, սկսում է «...որում եղեն նաւակատիք» (տ. տպ. էջ 7—94)։ Համմ. տպագրի Բ և Գ գլուխները։

H. էջմ. 940 (7), Մայր Ցուցակ հ. 920 (7), էջ 102—126։

Այս ճառընտրից օգտւել է ԳՏՄ և մի երկու տողով նկարագրել իւր «Պետրոս Սիւնեաց Եպիսկոպոս» հրատարակութեան մէջ։ (Տես Արարատ, 1912, էջ 88 և Պր. Մատ. ТИР. IX 1909 էջ 51, ծն. 1) Նկարագրութիւնը վերցնում ենք մեր ցուցակից։ Կաշեկազմ, հասա թուղթ, 33×25, ոսկեհ., խոշոր, երկսիւն բոլորգիր. վերջում ունի ընդարձակ յիշ. գրիչն է՝ Մաթէոս երէց, որ խնդրում է յիշել. «զհարազատսն իմ զսերբբասնեալ վանականսն գիգնատիոս... և զԵսային բանիբուն փիլիսոփայն և անհաս նկարող, որ երին երին գունով ծաղկափթիթ զարդարեաց զհրաշափառ... Տաւնական և կազմեալ զա... զոր գրեալ կայր սա զամս երրն քանիից...»

«Տէր Ա՞ծ վայելել տացէ սոցա... եղբարքն իւրեանց Թադէոս քահանայ և Սահմանոս և նոցին հարազատաւքն Աբգատակիսն և Յուսկանաւն։ Այլ և զկուսութեամբ ճգնեալ և զբնաւին պահող քոյր սոցին և սաղմոսող... որ բազում աշխատութեամբ սպասաւորեաց մեզ. նաև զմայր սոցա, որ զամս Լ. մեծաւ ճգնութեամբ... կեցեալ փոխեցաւ առ Ք՞ս։ Այլ և զնայրն իմ զմեծն Սուրդան և զեղբայրն իմ Իկիթաղայն. և զՔոջբէկ, և զմայրն իմ զՊարսն Թուխթէնի, և զԹուխթամ, որք բազում երախտիք ունին ի վերայ իմ Քրիստոսասիրութ, և զեղբարսն իմ զՓառուխշահն և զՍալուքշահն...

Գրեցաւ հրաշափառ Տաւնականս ի Վերի Նորավանս. Թվիս ՉԵ.» (1456)։

Կարևոր է այս Ջ-ի հատուածի վերնագիրը. «Երանելւոյն Աբրահամու խոստովանողի ասացեալ ի վկայն Աբելիից» իսկ ստորին լուսանցում. «Ոմանք գայս ճառս Եփրեմի ասեն ասացեալ» (տես տպ. էջ 22—25 և 27—34)։

E. P. D. և H Բ գլուխն ունին ոչ ամբողջութեամբ, այլ միայն մի մասը. (տես տպ. էջ 5—22, 25—27, 34—94)։

F. էջմ. հ. 914 (3), Մայր Յուց. 894 (3), էջ 67—75.

Նկարագրութիւնը մեր Յուցակից, բովանդակութիւնը Մ. Յուց. կաշեկազմ, թուղթ, 29×20, երկսիւն, նօտրգիր։

Ջ-ի վերջում կայ այս յիշ. «Փառք... սրում.. բազձացեալ իմաստուն վաճառական.. Պարոն Ոսճա Ոսկանն Դասա(ի)ակցին, որ է յերկրէն Նախչիվանու... յիշատակ.. հօրն Վալատին և մօրն Մարիամին...»։ (Յիշած են այլ ազգականներ)։

«Եւ եղև աւուրս գրչութեան տառիս ի քաղաքն Եղևսիա որ կոչի Յուրնա, ի դուռն Բարձրահայեաց Տիրամայր ս՚ը Ա՚ծածին.. ձեռամբ յոքնամեղ... Մաղաքիա գրչի. և ի թուականութեանս մերում. Ռ. և. ճ. ամի (1651) խիստ գառն և դիժար ժամանակի...»։

Յիշ. վերջից թևերի է։

Այս Ջ-ի մէջ է գլ. ԺԱ, երկրորդ խմբագրութեամբ (ա. տպ. էջ 189—195)։

S. Այս տառով Գալուստը նշանակում է Սուիերք Հայկականի հատ. Ի. Վէն. 1854։ S-ը Բ գլխի համար ամենալրիւ օրինակն է։

W. Վարք և վկայաբանութիւնք Սրբոց. հատընտիր քաղուածք ի ճառընտրաց. Վէն. 1874 Ա. էջ 89—102, 513—531, Բ. 33—37։

W 2. Վարք Սրբոց Ջ-ի հրատարակութեան լուսանցներում նշանակած «մի օրինակի» և «այլ օրինակ»-ի ցոյց տուող Քննադրները։

Դ.

Աչքի անցնելով մեր Յուցակը, գանք որ Աբրահամ Խոստովանողի Թարգմանութեանց օրինակները հանդիպում են նաև մի քանի ուրիշ ՁՁ-ում, որոնց յիշատակութեամբ կամենում ենք լրացնել ԳՏՄ վերոգրեալ ցանկը։

1. P2. Cod. Arm. n. 88. ԺԱ. դար. կաշեկազմ, հատ թուղթ, 643 թերթ, 51×33, երկսիւն, ընտիր երկաթագիր, ծաղկագրերով

և զարդերով. 42 տող. կազմը նոր է, թերթի սկզբից և վերջից. ունի բազմաթիւ յիշատակարաններ գլուխների վերջում, պակասում է գլխաւորը։

Ստացող՝ Պաւղոս, օրինակն ընծրող՝ Յուսիկ կրօնաւոր, Պապ անուն հայրապետ։ — «Տէր Ք՚ս ողորմեա ստացողի սորա Յոհաննէս հայրապետի մերոյ որ և փափագող եղև սորա փոխանակ ընչից ստացաւ ինչք իւր հոգևոր փարթամութիւն։ Ընդ նոսին ողորմեա և ինձ Պաւղոս գրչի»։

Թղ. 331 բ—336 ա. «Նահատակութիւն ս՚ը վկային Ք՚ի Ակեփսիմայ»։

2. P 3. Cod Arm. n. 47։ կաշեկազմ, հատ թուղթ, որից 36-ը անգրիկ, մեծադիր, 45×28, երկսիւն, խոշոր բոլորգիր, 41 տող։

Իբրև ստացող յիշած է՝ Յովհաննէս (Սեբաստացի), որդի Աւագ Տիկնայ, որ յիշւում է վենետկի ՁՁ-ից մէկում, գրած 1380 թուականին թէ Յովհաննէսը 1362 թ. եղել է եպիսկոպոս Դրիմում, ուրեմն մեր Ջ-ը մօտ ԺԴ դարու կիսից է։

Յիշ. 29 բ. «Ք՚ս Ա՚ծ ողորմեա ստացողի սորա պարոն Շահի..»։ 55 ա. «Ջստացող և գնարազատ որդին իւր զՅովհաննէս քահ. յիշ.»։ 102 ա. «Պարոն Շահի և ամուսնոյ իւրոյ Աւագ Տիկնայ և որդւոյ սոցին Յովանէս քահանայի»։

191. ա Տարբեր գրչով. «Յիշեսջիք ի տէր զորդի Պարոն Շահին Ֆռանկ Շահն և զկենակից նորա և զՄինա տիկին և զքոյր Պարոն Շահին զՄանամ տիկինն... և զբարեգան ք՚ն գկիրակոս»։ Յիշած են նաև ուրիշ անձինք։

Ջ-ից մէջ է, թղ 170. «Վկ. ս՚ը վկային Ակեփսիմա»։

3 P 4. Cod. Arm. n. 46, 46 A, 46 B, ՌԻՃՀ—1307 թուից։

Արտասովոր խոշոր Տօնական է որ Պարիզի Ազգային Մատենադարանում բաժանել են երեք մասի և երեք հատոր դարձրել։ Բարակ թուղթ, 334×277> 365 թերթերից բազկացած, 70×48, եռասիւն, ընտիր խոշոր բոլորգիր. ունի բաւական թերի մասեր, չզրած էջեր և բազմաթիւ կարևոր յիշատակարաններ, թէև վերջինը չկայ։ Բաւականանում ենք միայն մէկը արտագրելով։

Հատ. Բ, թղ. 164 բ, 2-րդ սիւնակ. «Ողորմեա ստացողի սորա Աւետիք վարդապետի, որ յորդորեաց զբազումս ի բարեգործութիւն և զարդարեաց եկեղեցի սուրբ, շինեաց եկեղեցի գըմբեթիկ յանուն սուրբ Ա՚ծածնին ի Գամճակ վանքն, և մի եկեղեցի յա՚ծապահ քաղաքն Կաֆա։ Եւ ետ գրել Տաւնական եր-

կու, զմինն եղ ի Բամճակն և զմիւսն ի Կաֆային հկեղեցին ի ա՛ր Երրորդութիւնն և եղ աւրհնութիւն զի խնամով պահեսցեն. և մի ոք ձեռնամուխ լիցի: Զի սոքա որ աւգնեցին ի գլխն սոքա Վասիլ երէցն և Յոհաննէս երէցն և Միխայլն ասացին թէ անէծք գրեցէք որ ի մեր ազգականացն ձեռնամուխ չլիցի: Նա չկամեցաւ վարդապետն. թէ աւրհնութիւն լաւ է քան զանէծքն:

Գրեցաւ գիրս ի ՌՃի մարդեղութեանն ՈԳՃ ամին»: Շարունակութիւնը աւրած է:

Այս տօնականի մէջ են.

Հատ. Բ. թղ. 4 բ, «Վկ. երան. եպիսկոպոսին Բաղիւոյի ի Պարսս ի Շապհոյ արքայէ: Յամս Շապհոյ արքայի սրար հալածուին սատիկ...»:

Այս Վկ. չկայ ԳՏՄ-ի հրատարակութեան մէջ, մենք գիտմամբ նշանակում ենք, կարծելով որ այդ ևս նոյն նիւթերին է պատկանում. անհրաժեշտ է ստուգել: Դժբախտաբար մեր ցուցակում աւելի տեղեկութիւն չկայ:

Հատ. Գ. 275 ա, սիւնեակ 1. «Վկ. սրբոց նահատակաց բազմաց արևելեան, որ կատարեցան վասն Ք՛ի. Զիարդ ժամեցայց...» Տպ. գլ. Բ:

4. Նուաստիկ հ. 9. Ճառընտիր: Կաշեկազմ, թուղթ, 899 էջ, 42×29, երկսիւն, լաւ բոլորգիր. գրիչ Ներսէս, ի խնդրոյ պարոն Ամբագին. 1699 թ. ուր Գրիգոր վարդապետ նորոգել է աւել, իսկ սուրբ Յակոբայ վանքին նւիրել է Ոռճա Պետրոս:

Էջ 45. «Վկ. Մելեայ եպիսկոպոսին, և Բորայ քահանային և Շինոյի սարկաւագին»:

Էջ 60. «Վկ. Թեկղի և Մարիամու և Մարթայի և Եմէի Փեբրոնեաց»:

Ե.

Հ. Բ. Սարգսեանի Վէնեակի Մխիթարեանների ՀՀ-ի տպագրած ցուցակը ձեռքի տակ չունիմ. բայց ունիմ Ալպերեանի ձեռագիրը ցուցակի 1908 թ. իմ արտագրած մի օրինակը: Այդ ցուցակից երևում է, որ Վէնեակի վանքում, զարձեալ ճառընտիրների մէջ գրած, գտնւում են այժմ հրատարակած վարքերի մեծագոյն մասը: Վէնեակեան հայրերը տպագրել են զոցանից զկատարսները. ա. Վկ. բազմաց Ս. Նահատակաց արևելեաց, (ա. տպ. էջ 5—94 և Սոփ. էջ 55—155, Եփ. Աս հ. Գ. 150—151),

բ. Վկ. Ս. Շմաւոնի եպիսկոպոսի (տպ. էջ 95—146, Սոփ. 7—54), գ. Վկ. Մելեսի եպիսկոպոսի (տպ. 177—187, Վարք և Վկ. Բ, 32—37) և դ. Վկ. Ս. Ակիփսեմայ (տպ. 197—216, Վք. և Վկ. Ա. 89—102):

Բացի այդ Աւգերեանի ցուցակի մէջ կայ հ. Ս. Կոստանեան Թեկղեայ (տպ. 189—196) և զ. երկու անգամ Արևելեան վկայից յիշատակութիւն կայ, մէկի համար ցոյց է տրւած ճառընտիր ԼԳ, էջ 385, միւսը Վէնեակի տպագրութիւնն է. ուղղագրւած ի Պարիզ (հ. 37, Թ. է):

Վէնեակի ճառընտիրներն են. համեմատ Աւգերեանի նկարագրութեան:

5. Ս. Մհձագոյն հզրիւք, 50×31, 5. 518 թերթ, երկսիւն, խոշոր բոլորգիր, լուսանցազարդերով. գրիչներն են՝ Թադէոս, հայր Կոստանդին, Վարդան և Ղազար: Ստացողն է. «Տէր Ա՛ծ օգնեա հայր Պետրոսի և Սարգսի նուիրակի, զի հրամանաւ սորա գրեցաւ ի գուան սուրբ Լուսաւորչի ի ՈՀԳ (1224) թուականին» (էջ 650): Կան և այլ կարևոր յիշատակարաններ:—«Ի սմա կան առաւելապէս վարք և վկայաբանութիւնք կարգեալ ընդհանրապէս ի վերայ այրուբենի, զի սկսանի ի վարուց Անթիմոսի և Աթանասի և երթայ կարգաւ մինչև ի վարս Փոկասու և Քրիստինեայ և յետ այնորիկ քանի մի վարք և պատմութիւնք այլով կարգաւ»:

Ունի գլուխք ԺԲ. Ժ և Գ:

6. Բ. (1014, Թ. Զ). Մեծագիր. թերի սկզբից և վերջից, հին բոլորգիր, նման երկաթագրի, ԺԲ դարու: Գրիչներն են՝ Սարգիս, Հայրուհի, Սահփանոս և այլք. վերջի յիշ. ՊՀԵ—1426 թուից:

Ունի գլուխք ԺԱ և Գ:

7. Ե. (1553, Ե. Ե.), Մաշհալ, թերի սկիզբն, բոլորգիր, թւականն է. ՈԿԴ—1215. «ի թագաւորութեանս հայոց Լևոնի ի վերջացեալ և ի նուագեալ դառն ժամանակի. յաւուրս աստուածապատիւ և հոգևոր ա՛ն Յոհաննէսի Հայոց կաթուղիկոսի, յաշխարհն Պաղեստին ի մէջ գերութեանս Երուսաղէմի ընդ հովանեաւ սուրբ Յակոբայ առաքելական աթոռոյս գրեցաւ գիրս... ցանկացաւ... ճգնաւոր ոմն անուն Յովհաննէս հանդերձ քեռի իւր կրաճնաւոր կարգաւ... ի վայելուն շնորհազարդ որդւոյ իւրեանց Գրիգորոյ Սարկաւագի...»

Ունի գլուխ Գ.:

8. ԻԶ. (731, Գ. Զ.) «Գրչագրեալ ի վ. հ. Ներսիսէ»: Ունի միայն ԺԱ գլուխը:

9. ԼԳ. (812. Գ. Ջ.) «Գրեալ ի Փարիզ»։ Այստեղ ընդօրինակած են Բ և ԺԲ գլուխները։

Այս հինգ ճառընտիրներից միայն երեքն են հին, միւս երկուսը արտագրութիւններն են հին ՁՁ-ից։

Սոփերքի մէջ տպագրած ս. Շմաւոնի վկայութիւնը և նրա շարունակութիւնը (էջ 55 են) հրատարակչի խիստ համառօտ Ազգից երևում է, որ առնուած է մի Էրկաթագիր, թերութիւններով լի ճառընտրից, առանց որոշելու թէ որտեղ է դանւում այդ ճառընտիրը։

Ազգի բառերն են. - «Ընդ գեղեցկավէպ վարուց Ս. Շմաւոնի Պարսից եպիսկոպոսի.. վաղ ուրեմն տպագրեալ առ ի մէնջ (հատ. Գ. Եփր. 150—152). իսկ զայժմուս գտեալ ի հնում երկաթագիր մատենի՝ թերի որպէս և էրն ի գլխոյ, ի միջոյ և ի վերջոյ տամբ ի լոյս, ոչ ունելով յոյս ի մօտոյ ուստեք լնուլ զպակասորդն»։

Համարեա ապահովապէս կարելի է ասել, որ Սոփերքի բնագիրն է Բ ճառընտիրը, որ համապատասխանում է Ազգի վկայութեանը։ Միայն անբացատրելի է մնում, թէ ինչպէս են հրատարակչի ուշադրութիւնից վրիպել Ա. և Ե. ճառընտիրները։ Հ. Բ. Սարգսեանի նորատիպ ցուցակը, եթէ տեղեկութիւններ պարունակի, թէ այդ ՁՁ-ը վանքը երբ է ստացել, խնդիրը կպարզի։

Ուշադրութեան արժանի է, որ հնագոյն, ԺԱ.—ԺԵ դարերի, ճառընտիրներումն ենք հանդիպում Արևելեան վկաների պատմութեան բնագրին, նորագոյնների մէջ ոչ։ ԳՏՄ իւր ձեռի տպած օրինակի լուսանցում ԺԲ և ԺԳ գլուխների դիմացը ծանօթութիւն է գրել. «նոր Թրդ», բայց չի պատճառաբանել։ Փարիզի ճառընտիրը, Cod. Arm. n. 88, ԺԱ. դարու, ունի միայն Ակեփսիմայ վարքը, տպագրի ԺԲ գլուխը։ Հրատարակչի կասկածը հիմնաւորուն այս ի նկատի է առնելու։

Չեռագրական աղբիւրներից է «Ազգաբար» Թերթի հրատարակիչը Աբրահամի անունը մտցրել է իւր ցանկի մէջ։ Այդ ցանկը պարունակում է 41 ինքնուրոյն, 18 Թարգմանական հեղինակների և գրուածքների անուններ։ Տպագրած է «Ազգաբարի» 1795 թ. էջ 188—192-ի մէջ և արտատպած Հ. Գ. Գալէմքարեանի, Պատմ. հայ լրագրութեան Վիէննա, 1893. էջ 205—210։

«6. Արևելեան վկայիցն պատմութիւնք զոր Թարգմանեցաւ սրբոյն Աբրահամու խոստովանողէ մինչ բանդարկեալ կայր ի պարսիկս սակս խոստովանութեանն սրբոյ հաւատոյ ի պարսից լեզուէ» (էջ 209)։

Լ.

Աբրահամ Խոստովանողին առաջին անգամ հանդիպում ենք Պարսկաստանի Նիւշապուհ քաղաքում, որ կոչւում է նաև Նիւշապուհ դղեակ (Ղ. Փարպեցի, Տփխս. 1904, էջ 86), Նիւշապուհ Շահաստան (էջ 89), կամ լոկ Շահաստան կամ դղեակ Շահաստան (էջ 89)։ Ղևոնդեանց քահանաների խումբը վերջին հրաժեշտն է տալիս կապել նախաբարներին, նախագուշակելով մօտալուտ մարտիրոսութիւնը։ Որևէ հայի արգելւած է այդ օրերը քաղաքից հեռանալ, կամ դրսից մտնել քաղաք, որպէսզի մահուան դատապարտւած քահանաների վկայութեան տեղը չմնայուն և նրանց նշխարները քրիստոնեաների ձեռքը չընկնին։ Քահանաները հրաժեշտ են տալիս բոլորին, պատրաստւում են վերջին ճանապարհորդութիւնը կատարելու։

Քահանաներին միանում են և «այլ մանկունք ի սպասաւորացն երանելւացն, որք եկեալ էին ընդ նոսա յիւիճնական յոժարութեամբ յաշխարհէն Հայոց», որոշած մասնակից լինել նոցա բոլոր տանջանքներին։ Մանաւանդ Խարհն Երեցը «որ էր ի գաւառէն Արարատու, ի գեղջէն որում անուն էր Որկովի, և երանելին Աբրահամ եւեց, որ էր ի գաւառէն Տայոց, ի գեղջէն որում անուն էր Զեճակ»։ Սակայն Վէհդենջապուհը խիստ պատւէր է արձակում. պահել նոցա Շահաստանում և չթոյլ տալ հեռանալու մահուան դատապարտւած քահանաներին։ Յոբէնն ու Աբրահամը համաձայն բողոքում են այդ կարգադրութեան դէմ և Դենջապուհը սպրդած Յազկերդ թագաւորին է ներկայացնում նրանց խնդիրը։

Թագաւորը այսպիսի վճիռ է արձակում, թէ՝ եթէ նրանք որևէ առանձին յանցանքի մէջ չեն մեղադրւում, պատւիրել որ երկրպագութիւն մատուցանեն արևին և պաշտեն կրակը, այնուհետև պարգևատրելով վերադարձնել հայրենիք, իսկ եթէ հակառակեն «պատուհաս կրեսցեն խեղութեամբ. և երթեալ յԱսորեստան մշակութիւն արասցեն ընդ արքունի մշակաց, և ի հարկի կայցեն մինչև ցվախճան իւրեանց»։ Եւ որովհետև նոքա բացէ ի բաց մերժում են հաւատուրացութիւնը, «կատարեցին զհրամայեալսն ի թագաւորէն։ Եւ կարեալ զերկոցունց զականջսն, եաուն տանել յԱսորեստան, ի գաւառն որ անւանեալ կոչի Շափուղ, կալ անդ նոցա ի հարկի և առնել մշակութիւն արքունի»։

Տէրացի քրիստոնեաները լսելով նոցա գալուստը, մեծ ըն-

ձաներ են բերում նրանց կարիքների համար, իսկ Աբրահամն ու Յորէնը այդ նէրերի մեծագոյն մասը ուղարկում են հայ կաթոլիկ նախարարներին, Ապար աշխարհը։

Վերջը Աբրահամը թոյլտուութիւն է առնում անձամբ այդ քննդանները մատակարարել տառապող նախարարներին և այդ կատարում է երկար տարիներ, մինչև որ սոքա արձակւում են կապանքներից և հայրենիք վերադառնում։ Յորէնը երէցը վախճանւում է Աստրիքում, իսկ Աբրահամը ձերաշխատութեամբ հաւատացեալոց աշխարհին, որք զտուն իւրեանց և զարաս փոխանակ ընդ հարկի նոցա գրեցին յարքունիս գվախճան նորա, և կատարեցին զկարզեալսն անվներ յաղագս նորա, արձակեալ զերանելի այրն նին ի հայս։ Եւ ձեռնադրեալ յաստիճան եպիսկոպոսութեան աշխարհին Բղնունեաց... վախճանէր ի նմին կարգի ի բարւոք ծերութեան (Ղ. Փ. էջ 105—106)[1]։

Ը.

Եղիշէն մի ամբողջ գլուխ է նւիրում Յորէնն և Աբրահամ խոստովանողներին (Հրատ. Մոսկ. էջ 164—172), բայց այդտեղ պատմական շատ քիչ բան կայ։ Դա մի վկայաբանութիւն է բառի անձուկ նշանակութեամբ։ Ղազարի և Եղիշէի միմեանց հետ բազդատութիւնը այս կէտում պարզ երեւում է երկուսի գրւածքների բնաւորութիւնը. Ղազարը ճշմարտախօս պատմիչ է, Եղիշէն վկայարան։ Աբրահամի անցեալ կեանքի մասին եղ. ոչ մի տեղեկութիւն չէ տալիս. ականջնները կարելուն աւելացնում է, որ Խոստովանողներին քարշեցին «չարագոյնս», «մինչև բազմաց կարծիք եղեն թէ մեռան»։ Եղ. սրբերի չարչարանքների վրայ աւելացնում է և մանր դան. «հրամայեաց զմահու դան հարկանել։ Եւ առ միմի ի նոցանէ փոխեցաւ վեցվեց այլ ի դահճաց։ Եւ մինչդեռ կիսամեռ յերկիր անկեալ դնէին, հրամայեաց զերկոցունց ականջս մօտ կարել»։

1) Ձասպւրականում Աբրահամի անունով վանք կայ. «երուանդունիք կամ Հայոց ձոր գաւառում է սուրբ Աբրհամու վանք. լեռներու ստորոտներ կան փոքր և անշուք վանքեր. Անկողայ վանք, Հէգուց վանք, Մարիննոսի (Սըրդու) վանք. որք մերձակայ գիւղերու անուամբ կը կոչուին։ Այս վերջինէն մի ժամ հեռաւորութեամբ դէպ արեւելեան հարաւ, Ղևոնդեանց աշակերտ սուրբ Աբրահամու վանք»։ (Ս. Խրիմեան, Հայրենագիտութիւն, Վարագ, 1883, էջ 14. Հմմտ. հ. Ն. Սարգսեան, Ճանապարհորդութիւն, էջ 280, Կոստանեան, Հիւսուածք Դ. էջ 142).

Եղ. կրկնում է Ստեփաննոսի կամ «յերկիրն Բաբելացւոց ի գաւառ մի զոր Շահուզն անուանեն» քրիստոնեաների ցոյց տւած օժանդակութեան պատմութիւնը և խոստովանողների այցելութիւնը նախարարներին։ Տաս տարի անց մեռնում է Յորէնը. իսկ Աբրահամը դեռ ևս երկու տարի էլ շարունակում է իւր օգնութեան գործը, մինչև նախարարների ազատւելով՝ ինքն էլ բնակիչների սաստարութեամբ վերադառնում է Հայաստան։ Այստեղ նա ապրում է առանձնական կեանքով (տես էջ 171—172) և, հակառակ որ նա երէց է կոչւում, եղ. վկայում է, որ նա ամուսնացած չէր։ Ղ. պատմածը աւելի ճշմարիտ ընդունելով, կարելի է կարծել, որ նրա կինը արդէն մեռել էր, որից յետոյ նա կաթողիկոսացաւ եպիսկոպոսանալ։

Այնքան որոշ չէ այն յիշատակութիւնը, որ կարդում ենք Ղ.-ի թղթի մէջ (էջ 202—203), ըստ որում մի ազնուական կին Աբրահամ եպիսկոպոսին (հաւանական խոստովանողը) հալածանքի է ենթարկում և նա ստիպւած խոյս է տալիս և առանձնանում է։

Աբրահամի յիշատակութիւնը կայ նաև Էակաց վրէ անվաւերականի մէջ։ (Տպ. ի Տրամաբանութեան Սիմէոնի Ջուղայեցւոյ կ. Պոլիս 1728, 154—75, Սրուանձտեան, Հնոց—նորոց, հ. Պ. 1874, 32—87. մասամբ ի թարգմ. Էլիզէ Ռեկլիւս, Լազ. Հայս. և Քուրդ. Վաղարշ. 1893, էջ 71)։ Ըստ այդ պատմւածքի սուրբ Սահակն ու Մեսրոպը հինգ անձ են ուղարկում Թէոդոս Թագաւորի մօտ. «Դաւիթ անյաղթ կոչեցեալ փիլիսոփայ և Մովսէս քերթողահայրն, իմաստասէրն Մամբրէ և հռետորն Աբրահամ, և տոցին նմանակից Պաւղոս»։ Սոցա Թագաւորը ուղարկում է Սբէնք կատարելագործելու և թարգմանութիւններ անելու։ «Աբարին և Մամբրէ և Պօղոս և Աբրահամ ճառս ոչ սակաւ պէսպէս խորհրդոց»։ Այս վկայութիւնը միայն այնքան նշանակութիւն ունի, որ հին ժամանակներում Աբրահամին թարգմանիչներին դասակից էին համարում։

Թ.

Անհամեմատ աւելի բանագրին են Թովմա Արծրունու մեզ հասցրած տեղեկութիւնները։ «Շատուհ արքայից արքայ Թագաւորեալ բազում և անչափ չարիս հասուցանէր ի վերայ հայոց աշխարհիս և Աստղհտանեայց և Պաղեստինացւոց, և վարեալ ի

գերութիւն զերէայն Ն բիւր, յաւէր դարձուցեալ զՀրէաստան և զսուրբ քաղաքն Երուսաղէմ. և զբավանդակ թոյնս անբժշկականս իժից և քարից եհեղ ի վերայ քրիստոնէից, յորմէ բազում սուրբք ի Քրիստոս վկայեցան, և որպէս ասի աւելի քան ԽՒ սրբոց առանց, որք վկայեցին վասն Քրիստոսի, բազումք յեպիսկոպոսաց, ի քահանայից և յայլ կարգէ յեկեղեցական գնդէ, բազումք և յազատաց աշխարհիս և ի տիկնանց նոցա անհնարին և զառն ասնջանօք զոր սարսափեմ և հիացմամբ մեծաւ յոգւոյ կրթին միաք իմ ընդ ժուժկալութիւն այնքանեաց բազմահնար մեքենաւոր չարչարանաց. որպէս ընթեռնուք ի գիրս Պատմութեան վկայելոցն, որ յԱրեւելեայ ասի գրոցն վերադրութիւն, զոր շարագրեաց եբանելի Խոստովանողն Քրիստոսի Աբրահամ, ի գեղջէն Արածոյ (?), որ էր աշակերտ և հետեւող սրբոյ Դաւնդեանց, և զսակաւուց քան թէ յոլովից գրեաց անուանս ի յիշատակարանի անդ. զՇահդոստ, որ թարգմանի արքայասէր, և զԳոհշթասդ, որ թարգմանի ներկագործ ծիրանեաց արքայական զգեստու, և զՇմաւոն եպիսկոպոս, վէմ եկեղեցւոյ Քրիստոսի, ընդ նմին և այլ եպիսկոպոսաք և քահանայք ալք ճ, որք կատարեցան միանգամայն սրով ի միում աւուր ի մեծի ուրբաթի Զատկին (Հր. ՍՊԲ. էջ 64—65):

Այստեղից անկասկած է, որ Թ. Արծ. իւր ձեռին ունէր Աբ.-ի գիրքը. կարդացել և նրա ամփոփումն է տալիս: Նա նոյն ձեւով ի մի է ամփոփել և Վարդանանց պատերազմի նկարագրութիւնը, որը նա կարդացել է ոչ թէ Եղիշէի, այլ «պատմի այս ի համառօտութեան Աբրահամու Խոստովանողի» (79—81): Ի վերջոյ նա յիշատակում է նաև նոցա ազատուիլը պարսկական գերութիւնից (Թ. էջ 207—208): [1])

Ժ.

Յիշած հեղինակների պատմուածներից Աբրահամ Երէցը մեզ ներկայանում է Վարդանանց նահատակների ժամանակակից, որ կամովին ենթարկել է ժամանակիր աշխատանքների քրիստոնէահալած պարսիկների կողմից, միայն թէ կարողանայ աքսոր քշած հայ նախարարներին սիրոյ օգնութիւն հասցնել: Ժամանակիր աշխատանքները նա կրել է Ասորիքում և այնտեղի քրիստոնեայ եղբայրներից կամաւոր տուրքեր ընդունելով, տարէցտարի հասցրել նախարարներին մինչև նրանց ազատուիլը:

Ոչ Ղ. Փ. և ոչ էլ Եղ. ոչինչ չեն հաղորդում Աբ-ի գրական գործունէութեան մասին: Առաջին տեղեկութիւնը այդ մասին գտնում է հակաց անվաւեր գրածքի մէջ, ըստ որում Աբ-ը Թարգմանիչների հետ գնացել է Բիւզանդիոն, այնտեղից Աթէնք. պատրաստել է թարգմանութիւններով և գրել «ճառս ոչ սակաւս պէսպէս խորհրդոց»:

Հ. Գ. Զարբհանալեանը (Պատմ. Հայ Դպրութ. Գ տպ. 295), առանց աղբիւրը ցոյց տալու, գրում է. «կը գտնենք տեղ մը հետեւեալ համառօտ տեղեկութիւն. «Արեւելեան վկայից պատմութիւն, որ թարգմանեցաւ յԱբրահամ խոստովանողէ, մինչ բանդարկեալ կայր ի Պարսիկս ի պարսիկ լեզուէ»: [1])

Աւելի հաստատուն և հիմնական ցուցմունք է Թ. Արծրունու հաղորդածը, թէ Աբ. խոստովանողն Քրիստոսի «շարագրեաց գիրք Արեւելեաց», որի մէջ պատմած էին. Շահդոստի, Գոհշթասդի Շմաւոն եպիսկոպոսի «և այլ եպիսկոպոսաք և քահանայք ալք հարիւր»-ների նահատակութեան պատմութիւնը: Թ. Արծրունին գրելով, որ Աբ-ը «շարագրել է» կամ մի այլ տեղ «գրել է» Արեւելեան վկաների գիրքը, ենթադրել է տալիս, որ Աբ-ն էր իսկապէս գրքի հեղինակը: Կարգալով Թ. Արծրունու վկայութիւնը, կարելի էր ընդունել որ նա իւր ձեռին ունեցել է Արեւելեայ գիրը հեղինակի անունով, առանց ցուցմունքի որ դա թարգմանութիւն է: Էջմիածնի Ի Ջ-ը իւր հատուածը վերնագրում է. «Երանելոյն Աբրահամի խոստովանողի ասացեալ ի վկայն Արեւելից» և որպէսզի հեղինակի անունը յատկապէս շեշտած լինի, առորին լուսանցքում աւելացնում է՝ թէ ուրիշները ճառը վերագրում են Եփրեմին:

Ծանօթութեան հեղինակը լաւ հիմք է ունեցել կասկածելի դարձնելու Եփրեմի հեղինակութիւնը, որովհետև Եփրեմը չէ վարքերի հեղինակը:

Թ. Արծ. վկայութեանը ոյժ է տալիս թարգմանութեան ընտիր լեզուն: Աբ.-ի թարգմանած գրքի ընթերցանութեան տպա-

---

[1]) Հատուածներ՝ ն. Ը և Թ. ԳՏՄ-ինն է, միայն թէ մենք կրճատեցինք հեղինակների բնագիրները. որ նա ամբողջութեամբ արտագրած ունէր:

[1]) Զարբ.-ի յիշատակած աղբիւրը անշուշտ այն է, որից օգտուել է Ագաթարի հեղինակը, կամ գուցէ Զարբ.-ը իւր տեղեկութիւնը անմիջապէս Ագաթարից է վերցրել:

ւոբութիւնն այն է, որ հինգերորդ դարու հայ լեզուին տիրապետող լաւագոյն վարպետներից մէկը, ազատ օտար և անհարազատ լեզուի կաշկանդուածներից, պարզ և դիւրահաս ոճով և միանգամայն անկախ կերպով, և ոչ թարգմանաբար, պատմում է քրիստոնէութեան համար նահատակուածների մարտիրոսութիւնը։

Ցիշելով մանաւանդ Աբ-ի կեանքը և նրա օրով հայ ժողովրդի կրած անասելի տառապանքները, զգացւում է, թէ ինչպիսի խորը արձագանքներ էին առաջ բերում նրա սրտի մէջ իւր թարգմանութեան բնագրի հետևեալի նման տողերը. «Վայ մեզ, քանի անհնարին են չարչարանքս, որ եկին հասին յամս մեր։ Վայ մեզ, քանի տրտմալից են կարիքս, որ եղեն թշուառական ազգիս։ Ո՞ր սուգ մեծ իցէ քան զայս, զի եկեղեցիք տապալեցան և սուրբ սեղանք կործանեցան և պարկեշտ սպասք պաշտամանց մատնեցան ի ձեռս պղծոց և անարժանից...։ Նահէաք և լայաք անդադար զցայգ և զցերեկ վասն բնկման աշխարհիս մերոյ և վասն չարչարանաց ժողովրդեանս և վասն ճգանց և նեղութեանց որ շուրջ պատեալ են զմեսաք առ ի խրատ մեզաց մերոց» (էջ 35)։

Այս տողերն էլ արդիօք թարգմանութիւն են, թէ թարգմանի յաւելուածը սուրբ բնագրի վրայ։ Մանաւանդ հետևեալը. «Որդիք Հայոց (Սոփերքի ընթերցուածն է ճարց) վշտատեսաց կոխան փղոց և երիվարաց .լինէին, քանզի արբին և նոքա զբաժակն դառնութեան, որոց նեղեալ և ճգնեալ գերին ի ճանապարհին և յաւթևանս նքողէին ի սովոյ և մեռանէին» (էջ 43)։

Թ. Արծ. իրաւունք ունէր, անձամբ կարդալով Աբ-ի ընտիր թարգմանութիւնը, և վերոյիշեալի նման հատուածներ, ամենևին չհակածել որ իսկապէս հայ հեղինակի հետ գործ ունի և ոչ թարգմանութեան։

ԺԱ.

Հակառակ Թ. Արծ. վկայութեան, հայ հին գրականութեան մէջ գտնւում է այլ հատուածն վկայութիւն, որ Աբելեան վկանների գիրքը իսկապէս թարգմանութիւն է, այն էլ սուրբերկնից։ Այդ տեղեկութիւնը պահուած էր ամենից առաջ գրքի ընդհանուր վերնագրի մէջ, թէև սխալմամբ Եփրեմին վերագրուած։ Հենրն իմացել են այդ սխալը, ինչպէս երևում է ճառընտրի տարբերակների ծանօթութիւնից։ Գրքի հեղինակի սուրբ լինելը կասկածից դուրս է.—այդ մասին վրքը չխոսի, միայն թէ ի նկատի

ունենալով Զաքրիանալեանի յիշատակած վկայութիւնը, ու այժմ թէական է թողնւում հայկական թարգմանութեան բնագիրը, ստրիբէն էր արդիօք թէ պարսկերէն։ Հարցի վերջնական լուծումը մնում է, երբ հայ թարգմանութիւնը կրազդատւի սուրբ բնագրի հետ։

Սուրբական գրականութենից յայտնի է, որ Եփրեմ Սուրին գրել է. Սուրբ գրքի մեկնութիւններ, մեկնարանական գրուածքներ ոտանաւորով, կրօնական բնաւորութեամբ ճառեր և շարականներ։ (Տես W. Wrigth, Syriac Literature, Encycl. Brit. t. XXII, p. 827)։ Հայերէն են թարգմանուած Եփրեմի բազմաթիւ երկերից չափազանց շատ բան, որոնց մէջ բացի յիշատակածներից կան նաև ապօթքներ, կցուրդներ և կրօնաւորների համար կանոններ (տես Հայկական Թարգմ. Նախնեաց, 1893, 443—466)։ Սակայն այդքան ընդարձակ կրօնական գրականութեան մէջ վարքագրութիւն չկայ։ Միակ օրինակը՝ Արևելեան վկանների յիշատակութիւնն է, այն էլ միայն հայ աղբիւրներում։ Բայց այդ սխալ է և ամենևին Եփրեմի գործը չէ այդ։

Վ. Ռայսը գրում է (յ. տ. էջ 828)։ «Սուրիքում ազգային պատմական գրականութիւն սկիզբն է առնում հինգերորդ դարուց»։ Այդ ասպարիզում նշանաւոր է հանդիսանում Մարութա, Մըփրկեան (հայերէն Նըփրկեան, յունարէն Մարտիրոպոլիս) եպիսկոպոսը, որի գրական գլխաւոր գործն է գիրք Մարտիրոսաց։ Այդ գիրքն է որ պարունակում է Շապուհ Բ-ի, Յազկերտ Ա-ի և Վահրամ Ե-ի թագաւորութեան ժամանակ նահատակուածների պատմութիւնները։ Մարութան հռչակաւոր եպիսկոպոս էր. Թէոդոս Բ. կայսեր կողմից երկու անգամ նա իբրև դեսպան ուղարկուել է Պարսից Յազկերտ Ա թագաւորի մօտ և նախագահել է Սելևկիայի կամ Կտեսիփոնի եկեղեցական ժողովին։ Նա ճանաչուած էր նաև իբրև հմուտ բժիշկ։

Մարութան գրում է, որ Մարտիրոսների գիրքը շարադրելիս օգտուել է նաև մի ականատեսի պատմածով, որի անունն էր Իսայա որդի Հազրոյի, պարսից թագաւորի ախոռապանի, Արզանէնէ (Ἀρζανηνή) գաւառից։

Սուրբ երկու խոշոր հեղինակներից մէրն է արդիօք հայ վարքերի հեղինակը։ Պատասխանը պարզ է. մինչդեռ Եփրեմից վարքագրական ոչինչ չունինք, Մարութայի գործը պահած է անկորուստ և հնարաւորութեան է տալիս հարցը դիւրութեամբ լուծելու։ Տարիներ առաջ Նորայր Բիւզանդը (Քննասէր, 1887,

Ստակհոլմ, էջ 50—58) գրել է. «Աբրահամ խոստովանող թուի թէ ամբողջապէս թարգմանած է պատմութիւն Մարութայի, վասնզի Թումա Արծրունի կը յիշէ նաև զվկայաբանութիւն Շահդոստի (Սղակայ և Տիսպոնի եպիսկոպոսին) որ մասն է Մարութայի գրոցն։ Մելիս եպիսկոպոսի և Ակիփսիմայ ևն վկր. առնուած են ի Մարութայի պատմութենէն, բայց իւիք փոփոխութեամբ և գեղջմամբք։ Այս երկու վկայաբանութեանց ոճն շատ հեռի է Աբ. Խոստովանողի ամենաընտիր ոճէն» (յ. տ. էջ 52 ծն. 1)։ (Մարութայի գործը հրատարակել է Ասեմանի լատիներէն թարգմանութեամբ 1748 թ. դրանից ֆրանսերէն է թարգմանել L'abbè F. Lagrange, Tours, 1876. գերմաներէն P. Zingerle, Echte Acten heiliger Märtyrer des Morgenlandes, Insbruck 1836. նոր հրատ. ասորերէն Bedjan Acta Martyrum et Sanct. II, 1891, 57—396)։ Ն. Բիւզանդը ձեռքի տակ է ունեցել Լագրանժի ասորերէն բնագրի ֆրանսերէն թարգմանութիւնը, նրանից հատուածներ է ընդօրինակել և դրական կարծիք յայտնել, որ Աբ-ը Մարութայի հոչակաւոր գիրքն է թարգմանել։

Ապագայում նոր ուսումնասիրութիւն կատարողին է մնում թարգմանութեան հարազատութիւնը և հնարաւոր յաւելուածների ու կրճատումների ատիճանը ցոյց տալու։

ԺԲ.

Ռայսի ցուցմունքից երևում է, որ Մարութայի գիրքը պարունակում է երիք թագաւորների կատարած նահատակութիւնների ժամանակաշրջանը. իսկ Ն. Բիւզանդը գրում է. «Մարութա ասորի գրած է զպատմութիւն երրորդ հալածանաց՝ զոր Շապուհ Բ յարոյց ընդդէմ քրիստոնէից և որ տևեց քառասուն տարի (340—380)։ Այս պատմութիւն կըսկսի Տիսպոն քաղաքի Շմաւոն եպիսկոպոսի վկայաբանութեամբ (որ թարգմանեալ է գեղեցիկ հայերէն լեզուաւ ի ձեռն Աբրհամու Խոստովանողի ի հինգերորդ դարու) և կատարի վկայաբանութեամբ Ակիփսիմայ եպիսկոպոսի, Յովսէփայ քահանայի և Այթալա (Այթիլատա) սարկաւագի» (յ. տ. էջ 51—52)։

ԳՏՄ-ի մի հատուած վարքերը համապատասխանում են այս բովանդակութեան. նա թէև ձեռին չի ունեցել Մարութայի գործը, բայց ծանօթ էր նորայրի գրուածքին, ուստի հիմք կայ կարծելու, որ գրքի «Յաւելուածը» այդ ծանօթութեան հետևանք է։

Յաւելուածի մանաւանդ վերջի երկու ԺԲ և ԺԳ գլուխները չունին Աբ-ի թարգմանական լեզուի գեղեցկութիւնն ու ճոխութիւնը։ Նորայրը կատածում է, որ զոքա ևս Աբ-ի թարգմանածը լինին. ԳՏՄ, անշուշտ համակարծիք լինելով, չէ կամեցել միացնել ընդհանուր բնագրին, այլ կցում է իբրև Մարութայի գործ և որովհետև հին ու ընտիր թարգմանութիւն է։

Դժուար է ընդունել, որ Աբ-ը Մարութայի գիրքը թարգմանելիս անտես է արել այդ գլուխները, այլ հաւանական ենթադրութիւնն այն է, որ Աբ-ի թարգմանութիւնից ուրիշ գլուխների հետ այդ վարքերն էլ են կորել, իսկ եղածները պահած են տարբեր թարգմանութիւնով, տարբեր ժամանակում կատարած։

ԺԳ.

Հանգուցեալ Գալուստը իւր կենդանութեամբ բազմիցս յայտնել է, որ հին վարքերը, մանաւանդ Աբ-ի թարգմանութիւնը, ահագին ազդեցութիւն են թողել Հայոց գրականութեան մէջ և յոյս ունէր այդ ապացուցանելու։ Առաջի փորձը կատարեց նա Գորիա և Շմոնի վարքի հրատարակութեան գեղեցիկ յառաջաբանով։ Աբրահամի մեծ գործը մեծ աշխատանք և ժամանակ էր պահանջում։ Տպագիր օրինակի բազմաթիւ ծանօթութիւնները, մատիտով ընդգծած բազմաթիւ բառեր և այլ և այլ նշաններ, ապագայ կառուցածքի ատաղձներն են, որ նրա մահով մնում են առանց հղփափակումների։

Նոր ուսումնասիրողներին է վերապահած այդ թերին լրացնելու։ Այժմ ԳՏՄ-ի հրատարակութեամբ Աբ. Խոստովանողի թարգմանութիւնը հայ բանասէրի ձեռն է տալիս իբրև հինգերորդ դարու դասական ամենաընտիր լեզուի մի կոթող, լաւագոյն հրատարակութեամբ ի լոյս հանած։

ԺԴ

ԳՏՄ ձեռքի տակ եղած տպագիր օրինակի լուսանցքների ծանօթութիւնները, որ վերաբերում են բնագրի փոփոխութեան, կամ վկայութիւններն են և ուղղելիքներ, և կամ ժամանակագրական ու պատմական տեղեկութիւններ, տալիս ենք այստեղ։ Շատ անգամ նա նշանակել է վկայութեան կոչող հեղինակի անունը միայն և մի շարք հարցական նշաններ է դրել։

Մենք արտագրում ենք նրա պատրաստի նկատողութիւնները և անորոշ ակնարկները այն չափով, որքան մեզ յաջողուց վկայութեան տեղերը գտնել։ Նրա ձեռքի տակ եղած տպագիրը օրինակը կպահենք իբրև ձեռագրի արժէք ներկայացնող մի գործ, էջ 1։

ա. վերնագրի մէջ «Եփրեմի»—կամեցել է փոխել «Աբրահամ», սակայն հարցականով։

բ. տող. 4. «Չի ամենեքեան օժտարեր ընծայատար լիցին մեծի հարանեացն», Ագ. էջ 80, § 140. «ինքն անցանէ ի Պարսս, ընծայատար Դարեհի», Խոր. Բ. գլ. իը. (Հրատ. Պատմագիրք Հայոց)։

գ. Տող 7. համմա էջ 104. «երեսներորդ առաջներորդ»։ էջ 111.

ա. Տող 1. «ելոյ մարդախանձ» եղիկ. ԺԲ. 3. 6. «Զգաղանաց առեալ բարս՝ սկսաւ լինել մարդախանձ». Բուզ Դ. 15։

բ. Տող 3. «Զգեցաւ իբրև զրահս զարդարութիւն. և եա ի գլուխ իւր իբրև զսաղաւարտ փրկութիւն. և արկաւ զիւրև հանդերձ և պատմուճան վրէժխնդրութեան». Եսայի ԾԹ. 17։ Համմա. «Եւ զգեցաւ զսատանայ որպէս հանդերձ արկաւ զիւրեաւ»։

էջ 118

Տող 140. Համմա. Գօշ. Խոսր. Գանձ. «Ապա թէ ոչ ապականեմ զգեղ քո վայելուչ.» Արարատ. 1896, էջ 592։

121. Տող. 2. արդրէդ—պայեակ։

127. Տող 108. Համմա. էջ 1, 2, 104, 131.

129. Տող 35-ից սկսած ազօթքը համմա վկը Ս. Աբդայի և Բենեհամինի, վարք և վկը. Ա. էջ 4։

130. Տող 56—60. վկ. Բենեհամինի, վարք և վկը Ա. էջ 4։ «Լուծութիւն ոսկւոց քո զօրասցի, ճանապարհդ ամենայն. վաստակք անդամոց քո հանգիցէ, օծեալդ. վիշաք սրտիս քո մոռասցին, բաժակ փրկութեան մերոյ. վտակք արտասուաց աչացս քո արգելցին, մխիթարութիւն ցնծութեան մերոյ»։

131. Տող 66. Զորեքտասաներորդ, համմա 126 տող 107։

134. Տող 8. «փոքր համարիմք զանարգանս զայս և առ ոչինչ զգաւս մարմնոյս առ մեծ սէրն Ա՞յ». Եղիշէ, Ը էջ 298. «Փոքր համարիմք մեք զչարչարանս զայս առ սէր փոխարինին զոր էարկ առ ազգս մարդկան» Եզ. Ը. էջ 135 (Հրատ. Մոսկվա)։

135. Տող 27. «այսինքն ի դէպ տեառնագալուստ փողոյն»—ընդմիջարկութիւն։

139. Տող 77. «Ձգէք զայս մարմնոյ վայր մի, և այժմ տեսանէք զյոյսն մեր Քրիստոս» Եղիշէ. Ը. 283 4։

141. Տող 1. «Յամին երեսներորդի և երկրորդի», համմա 104։

148. «Ի շարաթի ժը» շէրաթ ասորի ամիսն է=փետրուար= Մեհեկի ԺԲ։ Գալուստը տոմարական հաշուով Սադովկի նահատակութիւնը համարում է 435 թ., իսկ Ասդերեան՝ Լիակ. վ. Սրբոց 1815, ԺԲ, 335—6, ընդունում է 342։

151. Տող 24. «որ է տիկնոց տիկին Աբեղիշ»—ընդմիջարկութիւն։

153. Տող 68. «Մեք ի խօսման կամք քրիստոսի փեսային» Եփր. ՀԲ.

159. Տող 64. «ի բազում իրս (արքունիս) գաւս ճշտապէս» Եղիշէ Ը։

162. Տող 162. «որպէս կաւ գոհոյ կոխեցիչ գնոսա». Սադմ. ԺԸ 43։

163. Տող 176. «Եւ անդէն գնանգերձիկն պատառատուն որ գնովաւն էր՝ ի բաց գերծուին ի ճեռանէ». Ագաթ. էջ 107, § 198։

169. Տող 75. «Ուր են առաջինքն որ մեռան» Ագաթ. էջ 35, § 61։

173. Տող 8. «թանձրամիտքն յիմարեին և վատասիրտքն լքանէին». Եղիշ. Զ։

174. Տող 20. «Զոր ոչ ընդ գլով իսկ արժանի համարեցաք արկանել», Եզ. Բ. 28։
Տող 28—36. «Անհնարին է.... դիպիցուցիչ»—ունի ծանոթութիւն «ժամանակակից չէ»։

175. Տող 42—55. Եղիշէ։

187. Տող 286. «Զնրանն յազդէր կապեալ.» Բուզ. Է, 6, 32, 35.

189. Վկը. Ս. կաւս. Յայամ. Մարեբի ԻԴ և Մայիսի ԼԱ, որ ունի փոխ. Եմէի՝ Նեմէի։

191. Տող. 39. «Եւ ոչ մի ի բանից քոց զուզակեմք և զկամս քո և զխաչաւորին ոչ առնեմք», Հայկ. Բառ. «զուզակել»։

192. Տող 62. «Չի ոչ միայն զերկիրս այլ և զերկնից մեծութիւն առեալ ըմբռչնենացեաս», Թուղթ Գիւտ առ Վաչէ։

215. Տող 448. «Հրամայեաց չալոտիւք հարկանել յերկար մինչ ի գանել աւանդեաց զնոգին», Խոր. Գ. գլ. ԺԳ։

Գրքի տպագրութիւնը աւարտելուց յետոյ ԳՏՄ ստացել է Ախչիկ վարդապետի մօտ եղող մի ճառընտիր, որի մէջ գտնւում է ԺԹ գլուխը՝ վկր. Յովսեփեայ քահանայի ևն և իւր տպագիր օրինակի լուսանցներում նշանակել է հետևեալ գլխաւոր ընթերցուածները։

էջ 217—236.

Տող 1. Ախչ. «վկայական».
» 19. » «ամբարիշտ» փոխ. «անաւրէն».
» 83.84» «զոր աւրինակ ոք հայի և ջրոյ կարաւտանայ»
» 85. » «ցբազմհաւան».
» 114. » «քեզ այդ»։
» 119—120 » «և զնահատակութեան պատերազմ».
» 141. » «էդնեզ».
» 146. » «մարմնոցն.»
» 147. » չիք «շաւշեալ».
» 167. » «և համբուրէր զլուծեալ անդամս և զվէրս նոցա».
» 173. » «արդալ և կատարեալ քրիստոնեայ».
» 223. » «ի տաճար հրոյն» փոխ. «կռոցն».
» 231. » «ածել զնոսա, և ողոքանաւք և սպառնալեաւք սկսաւ խաւսել ընդ նոսա».
» 259. » «Թիւնիւք».
» 275. » «զղաւրութիւն».
» 311. » «այդու կենաւք».
» 319. » «առժամայս».
» 368. » «զարհուրեցուցանեմ».
» 398. » «և տանջել սաստկապէս».
» 438. » «զվերակուն իւր» փոխ. «հանդերձէն»։
» 457. » «և վասն երկիւղի մարդկան աչառութեամբ անկանել».
» 459. » «բերդին».
» 525. » «զդողման».
» 532. » «շաբաթուն».

Յանկի մէջ, էջ 238, ունի երկու կարևոր յանօթութիւն. հանդէպ գլ. ժ-ի. «Աբրհամայ և Սինէի վկայութիւնը պակաս է» և հանդէպ ԺԲ և ԺԹ գլուխների. «նոր թարգմանութիւն»։

Մեսրոպ եպիսկոպոս

Մայիս, 1921 թ.

Ա.

[A 384 B 330v C 67]

ՎԿԱԾՈՒԹԻՒՆՔ ԲԱԶՄԱՑ ՄԱՐՏԻՐՈՍԱՑ, ՈՐՔ Ի ՊԱՐՍՍ ԿԱՏԱՐԵՑԱՆ, ՀԱԶԱՐՔ ՀԱԶԱՐԱՑ ԵՒ ԲԵՒՐՔ ԲԵՒՐՈՒՑ, ԶՈ[Ր]Ս ԱՑԺՄ ՍՈՒՂ ՒՆՉ ՊԱՏՄԵՑԻՑ՝ ՉԱՐԱՆՑ ԵՒ ՉԿԱՆԱՆՑ ՑԱՆՈՒԱՆԷ ԵՒ ԱՊԱ ԳԵՏՈՑ ՉԲԱՒԱՆԴԱԿՆ. ԵՒ ԹԷ ՎԱՍՆ ՈՐՈ՞Ց ՊԱՏՃԱՌԻ ԵՂԵՆ ՎԿԱԾՔ. ԵՐԱՆԵԼՒՈՑՆ ԵՓՐԵՄԻ ՑԱՐԵՒԵԼԵԱՆ ԳՐՈՑՆ ԱՍԱՑԵԱԼ ՉԲԱՒԱՆԴԱԿՆ։

Յաւուրս Շապհոյ արքայի որդւոյ Արտաշրի՝ եկ հրաման ի Կոստանդիանոսէ բարեպաշտ թագաւորէ շինել զԵրուսաղէմի եկեղեցիան։ Եւ ամենայն քրիստոնեայք բազձային ընծայաբերք լինել սուրբ եկեղեցեացն։ Զոգան և ի Պարսից քրիստոնեայք ընծայիւք և հաւատովք։ Հլեալ գայս արքայի՝ գչարացաւ և յարոյց հալածանս ի վերայ քրիստոնէից յերեսուն ամի տէրութեան իւրոյ։

B ունի այսպիսի վերնագիր.—Վկայութիւն բազում սուրբ վկ. որք վկաեցան ի պարս, հազարք հազարաց և բիւրք բիւրուց. հակիրճ սուղ ինչ ասացից զարանց և զկանանց, որք եղեն վկայք։ C վերնագիրն է.—Երանելոյն Եփրեմի յԱրևելեան Գրոց ասացեալ զբաւանդականն. ասորիի յուսանցիւրում. Սուղ քան վասն Շմաւոնի եպիսկոպոսի և այլոց։

Տող 1 A Շապհոյ B Շապհո C Շապուհոյ AC յիմ արքայ 2 C բարեպաշտ 4 B ընծաաբերք 5 C և Պարսից քրիստոնեայքն B քրիստոնէական ընծայիւք 6 B Զայս լուեալ արքայ C լուեալ թագաւորն Շապուհ 7 B ի վերա քրիստոնէից C յերեսնեւերորդի B ևւրում

րոյ։ Եւ սպան նախ սրով զերծեալն յԵրուսաղէմ, և
համարէն իսկ շարժեաց զսուրն առ քրիստոնեայս, և
անուանի վկայք եղեն, որք են այսոքիկ.

Գողթաղդ, որ է գուձասպ նախարար, վկայեաց ի
մեծի հինդշաբաթուջ զաակին ի ԺԴ ապրիլեայ ամսոյ։

Եւ ի վաղիւն յուրբաթու Շմաւոն Հայրապետեան
զարսից երկու քահանայիւք և ճԺ արամբք ի ԺԴ ապ-
րիլեայ։

[Գուսակ] նախարար և զուսար իւր և Ապգ ներ-
քինի աղքայի վկայեցին ի ԺԵ նորին ապրիլեայ։ Եւ վասն
այսր արգելաւ սուրն յուսկայ և յանուանի արս և
ի կանայս մխեցաւ։

Զի և զԵահդուս փոխանակ Շմաւոնի կատարեցին
սրով ճ արամբք ի Ի ապրիլեայ։

Եւ զԹերբի հաւատաւոր և զքոյր իւր և զա-
ղախնայս սղոցեցին ընդ մէջ, և այնպէս վկայեցին ի Հ
ապրիլեայ. եւ գնշխարս սրբոցն լցեալ ի կողովս եդին
յարքունական պողոտային, զի բամբշացն ընդ այն ան-
ցանելով բուժեսցին ի ցաւոցն։

8 AC յիմ Եւ սպան — յԵրուսաղէմ 9 AC յիմ իսկ B սուր առ քրիստոնեայն C զսուր 10 B վկայք են C վկայք որ եղեն այսոքիկ են 11 C Գողգաղդ որ է գուձասպ B գուսասպ B վկաեալ C վկայեալ 12 BC ի տան և երեքն B ամսո C ապրիլ 13 C ի վաղիւ BC ուրբաթուն 14 B և հարիւր այր C և հարիւր և տան արամբք BC ի տան և ի չորսն C ապրիլեայ 16 AC Որէաս նախարար B Պահաս նախարար AC և ազգ B և ազգն, և ներքինի 17 B վկաեցան BC ի տան և ի հինգն BC յիմ նորին C ապրիլեայ 18 BC այսոքիկ A յուսամկաց B յուսամկացն 21 B յիմ սրով BC հարիւր արամբ ի քսանն C ապրիլեայ 22 B յիմ և (զԹերբի) B զաղախնեայս 23 վկաեցան ի յերեսունն C յերեսունն 24 C ապրիլեայ B եղեն ի կողովս և կաթեցին 25B պաղատին A բամբռչացն B բաբշացն B անցանել

Վկայեցին և այլ սուրբք արք ճ և կանայք Ի ի Ի
մայիս ամսոյ։

Վկայե և Յազատագուխտ անուանի կին և բարե-
պաշտ, և այլ կանայք ի Ի մայիս ամսոյ։

Վկայեաց և [Բարբաշմին] քեռորդին Շմաւոնի
մեծի ի Ի յունիս [ամսոյ]։

Վկայեաց և Մելէս եպիսկոպոս Վրհանայ, երեելի
այր, յՀ յունիս ամսոյ, ամենայն առաքինութեամբ և նշա-
նաւք ի Քրիստոս։ Եւ քաղաքացիք նորա առէին զնա
սակս յանդիմանութեան չարեաց, և զի ոչ գարձան՝
անէծ զքաղաքն։ Եւ ոչ ընդ յերկար լինէ՝ առաքեաց
արքայ և կործանեաց զքաղաքն, վրէժխնդիր Աստուծոյ
եղեալ։ Սա և Յնդիպատոս երեեալ և առ Անաոնի աշակեր-
տեալ վարժեցաւ կրաւնաւորական հանդիսիւք, և Յակո-
բայ Մծբնայ Հայրապետին նոյնպէս՝ առաքինեալ վարուք
և նշանաւք։ Սա և զՏիզբոնի եպիսկոպոսն՝ յամպարըշ-
տութեան եղեալ և ոչ գարձեալ՝ անէծ, և առ ժամայն
կոտճնաւեցաւ. և զարկաւագ ոմն ամպարիշտ սպան

27 B վկաեցան և այլք սուրբք արք հարիւր և կանայք տասն
ի մահի տասն Շհարիւր C ի տասն 29-30 B վկաեաց և այլ
զնդագուխս անուանի ակ կին և բարեպաշտ և այլ կանայք
ի քսանն մահս ամսո A յիմ ամսո C յունի ամբողջ հատուածը
31-32 B յունի ամբողջ հատուածը A բարեպաշտեն C բարեպաշ-
տաւն C յիմ մեծի C ի տասն յունիս AC յիմ ամսոյ 33 B վկա-
եցաւ A և Մեղկե և C և Մելխիէ B եպիսկոպոս AB վրանա
C վրկանա AC յիմ երեելի այր 34 B յեւթն C յեաւթն B յիմ
ամսո C նշանաւք և առաքինութեամբ 35 BC քաղաքացիքն
BC յիմ նորա B յիմ զնա 36 C յաղագս B չարութեանցն C չա-
րեացն 37 B և ոչ ընդ երկար լինէ ժամանակս 38 B եղեալ
յԱստուծոյ 39 C յեգեպատոս 39-42 B Սա ի յեգեպատոս և
Անդոնի աշակերտեալ առաքինացեալ վարուք և նշանաւք
39 C յիմ առ 42 C նշանեաւք BC զտիսբոնի C յամբարշտութեան
A յամպարըշտութեան 43 A անեծ 44 B ընկողմնեցաւ և

45 բանիւ։ Եւ [զսեերդինուտ] ոմն բորոտեայ բանիւ։ Նաեւ զվերնական դևս հալածէր և ի վերայ Ջուրց գնայր, բաղում և այլ նշանս արարեալ Քրիստոսիւ։ Եւ կատարի սրով յՈրմզդէ արքայէ աշակերտաւքն և Ներսիսիւ եղբարբ իւրով, որ զնոյն վարս ունէր։

50 Ցայս վայր ձգեցան և եղեն անթիւ վկայք ի փառս Աստուծոյ, որպէս դու ինքնին լուիցես ընթեռնլով զպատմութիւնս։

զասրկաւագն ամբաւիշտ բանիւ սպան C ամբաւիշտ 45 AC Եւ զսատրդիս ոմն անուն B և զսուտ երդմնուտ ուման 46 B յիմ նա B գևան հալածեաց բանիւ B ի վերա Ջրոցն 47 B բանիւ Քրիստոսի 49 AB ներսեսիւ B եղբարբն B ունեը 50 C ձրգեցան B և անթիւք եղեն վկայք 51 B որպես լուիցես դու ինքնին C և դու AB ընթեռնլով

Բ.

[A 384v B 331 S հատ. Ի, 55-155]

ՎԿԱԾՈՒԹԻՒՆ ԲԱՋՄԱՑ ՍՈՒՐԲ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԱՐԵՒԵԼԵԱՑՑ, ՈՐ ԿԱՏԱՐԵՑԱՆ ՎԱՍՆ ՔՐԻՍՏՈՍԻ։

Ա· Զիարդ ժառեայց մերձենալ տկարս զաւրութեամբ և տգէտս գիտութեամբ առ ի պատմել զսքանչելի վկայութիւն վկայիցն սրբոց և նահատակացն երանելեաց։ Զի ոչ ունի աղքատութիւնս իմ կազմութիւն պատմութեանս և ոչ համբար բազմահմտեր, այլ զնոսին վասն նոցունց աղաչեցից, զի իբրև զճշմարիտ տնտես ի փառաւորեալ գանձուց աստուածութեանն զոր սիրեցին՝ տայցեն ինձ իբրև խնդրողի գիտութիւն տգիտութեանս և զաւրութիւն տկարութեանս։ Զի կարող եղեց դնել և շինել ի վերայ հիմանն և գլխոյ որմոյն, այսինքն է Յեսուն խաչելոյն և ծառայիցն չարչարելոց։

Որոց հիմանն տանջանք և նեղութիւնք եղեն ձեռագիտք, և չարչարանք և մահ շինողք, և սպանմամբ բեւրուցն սիրելեաց շինեցաւ։ Որում խիստ և քաջ երկաթովքն հատան ցանկալի անդամք վկայիցն փոխանակ վիմաց, և սայրասուր տապարաւք կոր-

B վերնագիրն Ե. Պատմութիւնք պարսից վկայիցն որ ի նոյն ճառին։ S Ի Վկայն Արևելից։

Տող 2 B և պետս B զվկաութիւն աքանչելի 3 B վկայեց B նահատակաց 4 B պատմութեան 6 A նոցուն B ճըշմարիտ 7 B սիրեցինն 8 A յիմ ինձ B իբրև ի գիտութեանս 9 B շինել և գնել ի վերա 10 B և գլխոց որմոցն B յիմ Ե 11 B հիմն տանջանքն 12 B նեղութիւնքն եղեն ձեռաւակերտք 13 B շինաւղք և սպանմամբք իւր սիրելեացն 16 B կոտո-

ցան վայելուչ հասակք նոցա փոխանակ մայրից: Որում մարդախոշոշ մարմինք երանելեացն եղեն շինուածք, և
B 33 IV սուրբ Ջերմ արիւն նոցա ի ծեփ և ի շաղախ: Որում | քերանք և պսակք նահատակացն եղեն մենաբնակք, և նո-
20 վաւ վերացան ելին չարագանեալ մարմինք նոցա իբրև զկոփածոյ քարինս ի շինուածն: Որում չարալուկ քարկոծանաւք առաքինեացն կազմեցան աշտիճանք երանելեացն, և ի վայրապար* [ա]արեալ դնացիցն նոցա հոր-
25 դեցաւ ճանապարհ: Որում խորտակեալ բարձք ժրագլխացն եղեն սիւնք, և քարշեալ բազուկք նոցա հեծանք յոլովակիք: Որում ծակք կողից ճշմարտիցն եղեն
A 385 դրունք, և կուրութիւն աչաց նոցա | պատուհանք լուսաւորչաց: Որում սղոցեալ ոտք սրբոցն կոփեցան տախ-
30 տակք, և կտորեալ մնասուկք նոցա հաստատեցան իբրև դրեհեաս: Որոց համբարձան ոտքն ի հաստանել գլխոցն անմեղացն, և յարկաւ ձեղունն ի մոլթել մոլթոցն անարատիցն: Որում քանդեալ ոսկերք արդարոցն կանդնեցան դրունք, և մերկացեալ [ս]րունք զրկելոցն ձգեցան
35 իբրև վարագոյրք սրբութեան: Որում շիթք արեանցն ապանելոցն են փոխանակ դեղոց և երանգոց, և նկարե-

* Համմուլ. Որ տարապարհակ վարիցէ զքեզ մղոն մի .. Մատթ. ե. 41:

ցան 18 B մարդախողոշ 19 B և Ջերմ 20 B քերանքն B մենքենա 21-22 B և նաւ ավարեցան ելին: Զարագնեալ և գանգաղ մարմինք նոցա իբրև քարինս կոփածո ի շինուածն: 24 A երանելեացն B և ի վերապարշաբեալ դնացից A շաբեալ 25 B հորդեցան ճանապարհք 26 B յիմ եղեն սիւնք A բազուկք բազուկք 27 B յոլովակինք B ճշմարիտ ցնդեալ դրունք 28 A կորութիւն անձանց նոցա B կուրութիւնք աչաց նոցա 31 B որ B գլխացն 32 B ձեղունն ի մորթս անարատիցն 33 A կանխենեցան 34 A B մերկացեալ դրունք զրկելոցն 35 B արեան 36 A սպանելոց A դեղոց B երան-

ցան և զարդարեցան նոքաւք որմք և ձեղունք: Որում ի պատարագել անձանցն պատերազմողաց ուղղեցաւ սեղանն, և հալածեալ ոդիք նոցա, իբրև կատաք, տարա-
40 ծեցաւ զսեղանատուն: Որում եղեն նաւակատիք ի հատանել ճաշոցն արդելականացն, և պինի անուշութեան ի կարճել ընթրեցս պաշարելոցն:

S 55 Ո՛, քանի՛ ցանկալի է, տաճարն, որ շինեցաւ ի պատուական ապատութենէ: Ո՛, քանի՛ գեղեցիկ է յարկն,
45 որ յարկաւ ի կամաց կամարարաց: Ո՛, քանի՛ ահաւոր է սեղանն, որ ուղղեցաւ արեամբ և սպանմամբ մարդկան, զարիւն և զպանուճն Քրիստոսի կանգնեաց յաւրհնեալ եկեղեցւոջ:

Քո՛վ աւրհնութիւն ծէր մեր և Փրկիչ, որ վասն
50 փառաւորութեան հարսինդ քո հեղեր զարիւնդ պատուական, և առիթք և հարսնեղբարքդ հարսինն ըստ նմին աւրինակի նմանեցուցին և հեղին զարիւնս իւրեանց վասն նորա: Ո՛ հարսն խաւսեալ արեամբ փեսային և փեսաւերացն և առեալ կնութեան արեամբն
55 Աստուծոյ և մարդկան: Ո՛, քանի՛ ծանր են վարձանք քո՝ հարսն ցանկալի, քանզի արիւն է: Ո՛, քանի՛ մեծ են հարսանիք քո, քանզի սպանուածն է: Ակնաչեալ է փեսային հարսանիք քո, քանզի սպանուածն է: Ակնաչեալ է առ ի հաստատութիւն հարսնութեան քո, և կտորեալ
B 33 2 հարսնեղբարքն առ ի պէտս | հարսանեացն, և խառնեալ

գացն 36-37B և զարդարեցան և նկարեցան նովաւք: Համարեն որմն և ձեղունն 38 B անձանց պատերազմողացն 39 A կըտաւք B կտաւս 40 B յիմ ի 41 B ճաշոց A անուշութեան B յիմ ի 43 Այս տողից սկսում է S-ի հրատարակածը: SB ո՛վ 44 SB ո՛վ 45 SB ո՛վ 47 A զարիւնն 48 A եկեղեցւոջ 50 BS հարսին 51 B առիթք և հարսք, պի եղբարք 52 B նմանեցին 53 BS ո՛վ B հարսին B արեան 54 BS փեսաւերացս B առեալ հարսնութեան S ի կնութեան B արեամբ 55 BS ո՛վ B ծանր և վարձք 56 BS ո՛վ 57 B խաչեալ փեսայն 59 Aն հարսնեղբարքդ B հարսանեաց քոց և խաւսեալ

արիւն փեսային յրմռկելի քեզ և բաշխեալ մարմին նորա
ի մասունս հարսանեաց քոյ: Ուտիս յառագաստի խա-
չելոյն՝ և ուրախ ես, ննջես ի սենեկի քարկոծելոյն՝ և
ղուարթ ես, ընթեռնուս զնաման սպանելոյն՝ և յան-
հոգս կաս, կարդաս զգիրս խողխողելոյն՝ և ծիծաղիս:
Դադարեալ են աչք քո ի լալոյ և յեղեալ նստիս ի ցոյցս,
չելանէ կառանչ ի բերանոյդ՝ և յանձնապաստան ես:
Ջան այսօրիկ ետ քեզ փեսայն զսուրբ մարմինն իւր
յուտել, զի զկենդանի մահ նորա յիշեացես հեծումբեամբք,
և վասն այդօրիկ ետ քեզ զարդար արիւն իւր յրմռկել,
զի զանարատ զսպանումն նորա կացես միշտ ի մտի ար-
տասուաւք:

Զմտաւ ածծ և տես իւր փրկեցար, քննեա՛ և ծա-
նիր իւր գնեցար: Պատարագեալ է գառն սուրբ ի զատկի
քոյոյ քաւութեանն, պատարագեալ դասակը աւդեաց
ի տաւն քո ուրախութեանդ: Զինեալ է եղն պարարակ
յուրախութիւն|հարսանեաց քոյ, զենեալ որթք անդէոց
ի զուարճութիւն քոյոյ ցնծութեան: Հատեալ հացն
ցանկալի ի լուծիւն քոյոյ սեղանոյդ, խառնեալ գի-

61 B ի մատունս AS յառագաստ A խաչելոյ 62 B քար-
կոծելոյն և յանհոգ կաս 63 B սպանելոյն և զուարթ ես 65
B և յեղեալ նստիս ի ցոյս S և յեղեալ ի ցոյս 66 S կառաչ
A ի բերանոյդ B ի բերանս քո 67 B փեսա S սուրբ փեսայն
զմարմինն 68 A ուտել B մահն B հեծումբեամբ քո 69 BS
այսօրիկ S յիմ զարդար B արինն S զարիւն յիմ իւր B յըմ-
քել S ըմբել 70 B սպանումն կալցիս ի սրտի քում և ար-
տասուաւք 72 A զմըտաւ 73 AB յիմ է S սուրբ ի պատիւ
B գառն սուրբ զատկի քո քաւութեանն 75 S ի տուն
փոխանակեսցի. զպատիւն զոր ետուր ինձ ուրանամ, զի
ամենևին լի արամութեամբ է, և զմահն զոր ետուր նոցա
յանձն առնում, զի ամենևին լի ուրախութեամբ է։

90 Ասէ ցնա արքայ. Եւ արդ մահ խնդրես փոխանակ
պատուին զոր առեր, ով խելայեղ։

73 A կոգպետ 74 B արուեստայգիտաց արքայի, այն ինչ
ի յայն աւուրս A ընդ նոյն աւուրս 75 BS առեալ եր [S էր]
B ի յարքունուստ C առեալ էր 76 BS և ասե C անա-
նիայ քո և 77 BSC խնդ վայր մի զաչագ B զյոյսն Քրիս-
տոսի A զյոյսն Քրիստոսի S զյոյսն Քրիստոս 77—79 C և
անդէն տեսանես զյոյսն Քրիստոսի, և կալեալ զնա վազվազակի
ածին առ արքայ. 79 B չարաչաւսել վասն բանին S վասն
բանիցն զոր լուան 81 B արքայն A ընդնա 82 S և գործ
արարի C և ի գործ կարգեցի 83 B զհրամանս իմ B դա-
տարկացդ 84 C քո որ մեռանին 85 B իբրև զդատարկու-
թիւնն զայն լինիցի շահաւոր S իբրև զայն լինիցի դատա-
կութիւն շահաւոր C Եւ նա ասէ, ամենայն 86 B մահուն
նոցա փոխանակեսցին 88 S քո և B քո և զմահն զոր ետուր
նոցա փոխանակեսցին 90 A ընդնա B արքայն SC ասէ ար-
—ուրախութեամբ է
քայ

Ասէ առաքինին. Ես քրիստոնեայ եմ և յԱստուածոյ նոցա յուսացեալ եմ, ուստի այնորիկ սիրելի զմահ նոցա, զի կեանք են, և անարգեմ զպատիւն քո:

Եւ ետ հրաման մեծաւ ցասմամբ և ասէ, եթէ Զդա մի՛ իբրև զայլսն սպանանիցէք, այլ փոխանակ զի անարգեաց զպատիւն զոր ետուս, և խառնեցաւ ընդ իս իբրև ընդ ընկերի, զկնի ընդ ծոծրակին հանէք, զի ամենեքին որ տեսանիցեն զդա՝ զահի հարկանիցին:

Եւ արարին այնպէս որպէս և հրաման ետ. կտրեցին անդէն ի նմին ժամու և սպանին:

Էր նորա դուստր մի հասատաւոր, չոգան չարախաւս եղեն զնմանէ թէ քրիստոնեայ է: Եւ առաքեցին ետուն ածել ի դուռն արքունի: Սպանաւ և նա վասն յուսոյն Քրիստոսի Աստուծոյ մերոյ:

91 SC պատուիդ C ով խելայեղդ 92 B ի յաստուած C քրիստոնեա 93 SC և վասն 94 BSC յիմ զի կեանք են S յիմ և BC անարգեցէք SC զպատիւ 95 B Եւ մեծաւ ցասմամբ հրաման ետ S իսկ արքայ մեծաւ ցասմամբ հրաման ետ A զդայ C իսկ նա ցասմամբ մեծաւ հրաման ետ եթէ զդայ 96 B զայլսդ BS սպանանեք 97 S որպէս ընդ ընկերի 98 S զկնի ընդ ծոծրակին S ամենեքեան C զի որք տեսանիցեն զնա զահի հարկանիցեն 99 B զդայ զահի հարկանիցեն 100 B յիմ այնպէս BS յիմ և (հրաման) B և կտրեցին S կտրեցին զկնդուն անդէն 100—101 C և արարին այնպէս, և հատին զգլուխ նորա: 101 B անդրեն ի նմին ժամուն S և սպանին զնա 102 B չարախաւսեցին 102—105 C չարախաւսեցին զնմանէ թէ քրիստոնեա է. և ածին զնա յատեան. մեռաւ և նա վասն Քրիստոսի: 103 AB յիմ զնմանէ A թէ քրիստոնեա ե A և առաքեցին ի տունն ածել ի դուռնն B և առաքեցին ածին զնա յիմ ի դուռն արքունի S յիմ և S առաքեցին և ետուն ածել ի դուռն արքունի 105 SC յիմ Աստուծոյ մերոյ

Ը. Յամին երեսներորդի և երկրորդի Շապհոյ արքայի, յաւուր յայնմիկ եկ հրաման անողորմ և մերկացաւ սուրն ի կոտորել յանհնայ զամենայն որ ասէր թէ քրիստոնեայ եմ, Աշխատեցան սրիչք սրոյն և լքան պարտաւեցան բազուկք սպանողացն, և ձշմարտութիւնն ոչ աշխատեցաւ և ստութիւնն ոչ թուլացաւ: Սակայն որպէս խորհեցաւն ոչ եղև, և որպէս զմտաւն ած՝ ոչ կատարեցաւ: Նմա այսպէս թուէր, եթէ հարիւր արամբ[ղորդ սպանանէ՝ առնիցի կատարումն արեանն: Մեռան հազարք հազարաց և դեռ սկիզբն էր, զի յուրբաթէ չորեքտասաներորդին ի վեց ժամէ, յորմէ հետէ եկ հրամանն, մինչև ի միւս կիւրակէ երկրորդ շաբաթու պենտեկոստէին՝ որ առնի տասն աւր ոչ[դադարեաց սուրն ի գործոյ:

1 BSC յամն A երեսներորդի յիմ երկրորդի BC երեսներորդի երկրորդի A Շապհոյ 2 C յիմ յաւուր յայնմիկ 3 S յիմ յանհնայ S որ ասիցէ C զամենեսեան որ քրիստոնեա անուանէք զնիք: 4 C յիմ սրիչք սրոյն 5 AB պարտեցան բազուկք C յիմ պարտասեցան C ճշմարտութեանն 6 A Սակս այն B սակայն SC սակայն C ոչ թուլացաւ 7 S խորհեցաւ նա B զմտաւ C յիմ և որպէս զմտաւն ած՝ ոչ կատարեցաւ: 8 B նմայ այսպես A նմա այս S թուեցաւ թէ հարևր C զի թուէր նմա թէ հարիւր արամբն զոր սպանանիցէ լինի կատարումն գործոյն: 9 BS սպանանիցէ B առցե զկատարումն արեանն S առնիցէ կատարումն արեանն 10 B և դեռ ևս սկիզբն էր 10—13 C զի յուրբաթէն ի վեց ժամէ եկ հրամանն, և մինչ ի միւս կիւրակէ երկրորդ շաբաթուն որ լինի տասն աւր 11 B չորեքտասաներորդին B յոր 12 S մինչև ցմիւս B կիւրակէն A պենդեկոստեին B պենդեկոստեկին S պենտակոստէին 13 A որ առնի ժ աւր B որ լիներ աւուրք տասն S որ լինին աւուրք տասն S ոչ դադարեցաւ B սուրն ի գործելոյ

Թ. Ո՛վ պատուական տաւն մեր, որ արժանի եղև խառնիլ ի տաւնն մեծ: Ուրախ եղեն ի նմա փեսայք մկրտեալք երկրորդ մկրտութեամբ, այսինքն արեամբ պարանոցացն, և այսուհետև ոչինչ երկնչին ի ներկուածոյ մեղացն: Նովաւ ցնծացան սգաւորքն, որ մտանէին ի սուգ ի պահս քառասնորդացն, զի երթիան վայելեն զանապատ ժամանակս յուրախարար բաղմականին: Նովաւ քահանայք լուացան Ջրով արեանց անձանց, և ոչ ևս լինին կարաւտ ապաշխարութեան արտասուաց: Նովաւ աշխատեալք և մատյդք լուեցին, և այլ ոչ ևս խռովին և պղտորին ի հոգս և ի ծուխս աշխարհիս: Նովաւ ազատք գտան զերեցին յընչից համարոյ և ի տանէ և ի կենաց զբաւանաց:

Նովաւ ազատ կանայք ապրեցան ի պէսպէս նկարագործ անաւթոց և առ ի զաւարտն ամէն ամէն թաւթաւիելոյ: Նովաւ ծառայք ննջեցին և հանգեան, և չիք ոք որ զարթուցանէ ի սպաս և ի գործ տէրանց: Նովաւ

A 407v
B 181v

1 B տաւնեը որ արժանի եղեն C մերոյ արժանի 2 B ի տաւն S ուր ուրախ B ի նա AB մկրտեալք C փեսայք ի նմա մկրտեալք 3 B մկրտութեամբն B պարանոցացն C մկրտութեամբն իւրեանց յիմ այսինքն արեամբ պարանոցաց 4 B յիմ և S ոչ երկնչին AB երկնչին B ի ներկուածս S ի ներկուածոյ BC մեղացն 5 SC ցնծան S ի պահս քառասներորդացն B ի պասքայդասներորդացն C որ մտանեն 6 BSC երթեալ B վայելեսցեն AB զանբսպառ A ժամանակն C ժամանակն յիմ յուրախարար բաղմականին 7 BS բաղմականան 8 ABS Ջրով իւրեանց անձանց C Ջրով արեանց անձանց 9 AB մրտայոյգք 10 C յիմ այլ C ի ծուխս և ի հոգս 11 C ընչից և ի զբաւանաց երկրաքարշ խորհրդոց: 12 BS համարոց B և ի տան և ի կենաց զբաւանաց 13 B ազատականայք C նովաւ կանայք մեծատանց 14 B և առ ի զաւարտունս S և առ ի վաւարտն C անաւթից նկատելով զանակ պայծառութիւն յիմ և առ ի զաւարտն—թաւթաւիելոյ: 15 AB ծառայքն

աղախնայք բուժեցան և մոռացան զահ և զերկիւղ տիկնաց: Նովաւ ձգնեալք մխիթարեցան, զի ոչ ևս ածին զմնաւ զգաւս և զչարչարանս: Նա թէպէտ մեր մահս յարութեամբ նորոգի, այլ վարձք և հատուցումն սպանողացն մահ և կորուստ լիցի: Մատնեացին ի չարչարանս, փոխանակ զի յանխնայ հեղին զարիւն մեր: Սուրք անաւբրինացն, որով կոտորեցին, մացին ի սիրտս նոցա. և աղեղունք նոցա խորտակեացին ի բազուկս իւրեանց: Ամաչեացին և մատնեացին ի պարտութիւն, յորժամ լիցի յաղթութիւն սպանման մերոյ, և յարութիւն և նորոգումն մահուց երանելեացն: Մեզ պարծանք և անուն, և նոցա կորանք և նախատինք: Մեզ փառք և պատիւ, և նոցա ամաւթ և անարգանք, զի ի քեզ Ցիսուս յուսացաք և ի քեզ Քրիստոս քաջալերեցաք:

Գայլին յամենայն կողմանց ի համբաւ մարտիւրոսութեանն, և փութային ձեռքին առնուլ զպարգևսն կե-

15—19 C և հանգեան ի սպասաւորութենէ տերանց. և մեծաւ յուսով սպասեն նորոգողին տ՚ն յ՚ի ք՚ի որ հանգուցանէ զաշխատեալս: Եւ թէպէտ մեր մահն 17 S զերկեւղ B տիկնացն 18 B յիմ և S ածեն 19 AB զմբտաւ A մեր մահն B և թեպետ և մեր մահս S և արդ թէպէտ և մեր մահն 20 B այլ սպանողացն վարձք և հատուցումն C սակայն վարձք 21 S սատակեացն ի չարչարանս 21—23 C մատնեցին ի չարչարանս և յանխնայ հեղին զարիւնս. և սուրք անաւբինացն որովք կոտորէին 22 B զարիւնս մեր S զարիւնն մեր 23 AB որովք B կոտորեին B ի սիրտս նոցայ A ի սիրտս իւրեանց 25 A լինիցի C և ի պարտութիւն մատնեացին 26 BC սպանմանն մերոյ C յիմ և C յարութիւն մատնեացին 27 BC մահու յերանելեացն մեզ անուն պարծանաց 28 C յիմ և (նոցա) 29 ASC յիմ և (նոցա) S զի ի քեզ Ցիսուս՝ քաջալերեցաք ի Քրիստոս յուսացաք և ի քեզ Ցիսուս՝ քաջալերեցաք 31 A գալին B մարտիրոսութեանն S մարտիրոսութեան C եւ այսպէս գալին C մարտիրոսութեան 32 BS զպարգևս կենացն C և փութացեալ ճեպէին առնուլ զպսակն կենաց:

նաց և մատնէին իբրև զգառինս ի ձեռս խոշակերացւոյ:

Եւ մոգպետաք որ գային ուստեք ուստեք յաշխարհաց
35 ածէին ընդ իւրեանս շղթայիւք զքրիստոնեայն ի համբաւ կոտորելոցն, որ էլ ընդ աշխարհն ամենայն. և ասէին թէ երբ իցէ հրամանն և մատնեսցին զնոսա ի սպանումն. քանզի ի պարծանս իմն անոտիս համարէին զկոտորած երանելեացն:

40 Եւ որչափ սուրն յազէր, նոքա և աս քան զևս քաղցնուին մահուն, և այնչափ սոսկալով կոտորէին, մինչ զի և ոչ գիտէին թէ ով իցէ զոր սպանանէին, բայց այնչափ միայն՝ զի հարցանէին թէ, վասն ևր է մահն: Մինչ զի ներքինի մի սիրելի արքայի սպանաւ ի խառանն կամաւ վասն Քրիս-
45 տոսի, որոյ անուն էր Ագդ: Հուաւ արքայ և տրամեցաւ, ապա հրաման եա, թէ Մի՛ զամենեսեան որ կամին մեռանել

33 B և մատնել որպես գառինս ի ձեռն խոհակերացն C յիմ և մատնէին—խոհակերաց: 34 A գաին B և մոգպետաք որք գային S յիմ յաշխարհաց B ածեին ընդ իւրեանս զքրիստոնեայն շղթաւիւք ի համբաւ կոտորածոյն S շղթայիւք ածէին զքրիստոնեայն ի համբաւ կոտորածին C նաև մոգպետաք որք գային 35 C զքրիստոնեայս ի համբաւ կոտորածոյ 36 B որ եւանեը ընդ աշխարհս ամենայն 36—39 S յիմ և ասէին թէ երբ իցէ—վկոտորած երանելեացն C աշխարհս ամենայն և անոսային 37 A և մատուսցեն զնոսա C և մատուսցեն ի սպանումն զնոսա 38 A յիմ անոտիս B համարեին զմահ երանելեացն C զի պարծանս իմն անոտի համարէին զմահ սրբոցն: 41 B ի մահուն B մինչև ոչ գիտէին ով իցէ զոր սպանանէին S մինչ ոչ գիտէին ո՞վ իցէ որ սպանանէին 41—45 C և այն ոտիպով տագնապէին մինչ ոչ գիտել զոր սպանանէին. մինչ և ներքինի մի սիրելի արքայի մեռաւ վասն ք՝ի համաւոր որոյ անուն էր Ագդ: 43 BS յիմ թէ 44 B ի խառնն A ի խառն BS կամաւք 45 A Ագդ B Ագըդ S Ագդա C Ագդ 46 B եթէ A զամենիսեան S եթէ զամենեսեան որ կամին մեռանել մի՛ սպանանէք C եթէ մի՛ զամենեսեան սպանանէք

սպանանէք, բայց զոր գիտիցէք թէ վարդապետաք իցեն ուսմանն:

Անուանք արանց և կանանց և մանկտւոյ, որ կոտորե-
50 ցան յայնմ կոտորածին, բայց ի քաղաքին միայն, այլ ուրեք ոչ եղև յայտ, քանզի բազումք էին և ոչ ոք կարէ ուրնել զթիւ անուանցն, որ ուստեք ուստեք յամենայն կողմանց ժողովեալ էին: Եւ աշխարհականք ի գաւառացն ար-
Вւ8ջ քունի բազումք մեռան ինքնակամ յաւժարութեամբ յանունն Աստուծոյ: Եւ պատեցան ի Քրիստոսէ Ցիսուսէ
55 նուն մարտիրոսութեան, որ եղեն վկայք ճշմարիտք մեծի անուանն Աստուծոյ: Եւ պատեցան ի Քրիստոսէ Ցիսուսէ Փրկչէն մերմէ:

47 B բայց որ վարդապետքն են ուսման նոցայ S բայց որ վարդապետք են ուսման նոցա C այլ զոր գիտէք եթէ վարդապետք են ուսման նոցա: 49 C մանկտոյ որ վկայեցան յայն կոտորածի 50 BS կոտորածի B ի քաղաքին C ի քաղաքէն 50—57 այլքն չեղեն յայտ, զի բազումք էին և ոչ ոք գիտաց զթիւ անուանցն որ ուստեք ուստեք ժողովեցան և ի գաւառացն արքունի բազումք մեռան ինքնակամ յաւժարութեամբ յանուն մարտիրոսութեան որք եղեն վկայք մեծին այ. և պատեցան ի ք՝ե յ՝ե ս՝ը մեր, որում փառք յա". † Բարէխաւսութեամբ և աղաւթիւք ս՝ը և փառաւորեալ հայրապետիս Շմաւոնի և այլ ս՝ը վկայից, ա՛ը ամ ողորմի ստացաւղի ս՝ը գրոցս՝ պարոն Տէրածին և ամուսնոյն իւրոյ Փոքը Տիկնա և զաւակաց նոցա և ամենայն զարմից [մէնն]: Եւ դուք զմեզ". 51 B ոչ եղեն S բազում մեցն ա[մէն]: Եւ դուք զմեզ". 51 B ոչ եղեն S բազում B յիմ քանզի բազումք էին 52 AB և ուստեք ուստեք 53 A ժողովեին B ի գաւառաց 55 B մարտիրոսութեան S մարտիրոսութեանն որ եղեն A վկայք ճշմարիտ B վկայ ճշմարիտ 56 A Եւ պատեցան յամենազաւրս աջոյն՝ փառաւորելով զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին, այժմ և միշտ և յաւիտեանս ամէն: B Եւ պատեցան ի ք՝է ճ և փրկիչն մերմէ. Վ՛ա զի ամենասուրբ Երրորդութեանն վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեան յաւիտենից: Ամէն: Ջատացող և զբօղս յիշեաջիք:

Ժ. Այսպէս կատարեցաւ սուրբն Շմաւոն եպիսկոպոս ի Շապհոյ Պարսից արքայէ, յաւուր չարչարանաց Տեառն մերոյ Յարեաւը արամբք ժառանգաւորաւք սուրբ եկեղեցւոյ և ընկալան զպսակս անապականս ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. որում վայել է փառք և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ABC չիմ ժ հատուածը ամբողջութեամբ:

Գ.

[ԶՇահդուս՝ վոխանակ Շմաւոնի՝ կատարեցին սրով Յարիւր արամբք ի քսանն ապրիլեայ:]

Տես էջ 2, տող 20—21:

Շահդուսի՝ կամ լաւ ևս՝ Շահդոստի վկայաբանութիւնը կորստած է և մեզ չյաջողուեց այդ գտնել մեր մատենադարանում: Պէտք է յուսալ, որ կամ մեր կամ ուրիշ մատենադարանում աւելի բազդաւոր մէկին յաջողուի գտնել այդ վկայաբանութիւնը: Իսկ թէ հին թարգմանութեամբ կար Շահդոստի վկայաբանութիւնը՝ այդ կասկած է բոլորովին ապահով համարել: Բացի Ն գլխի վերևում դրուած երկու տողից, այդ բանին վկայում է և Թովմայ Արծրունին այսպէս.

«Շապուհ արքայից արքայ թագաւորեալ՝ բազում և անչափ չարիս հասուցանէը ի վերայ Հայոց աշխարհիս և Ասորեստանեայց և Պաղեստինացւոց, և վարեալ ի գերութիւն զՀրէայն Ն բիւր, յաւեր դարձուցեալ զՀրէաստան և զսուրբ քաղաքն Երուսաղէմ. և զբովանդակ Թոյնս անբժշկական իժից և քարբից եհեղ ի վերայ քրիստոնէից. յորմէ բազում սուրբք ի Քրիստոս վկայեցան, և որպէս ասի աւելի քան Խ սրբոց արանց, որք վկայեցին վասն Քրիստոսի, բազումք յեպիսկոպոսաց, ի քահանայից և յայլ կարգէ յեկեղեցական գնդէ. բազմադոյնք և յազատաց աշխարհիս և ի տիկնանց նոցա անհնարին և գառն տանջանօք, զորս սարսափեմ և հիացմամբ մեծաւ յապուշ կրթին միտք իմ ընդ ժուժկալութիւն այնքանեաց բազմահնար մեքենաւորը չարչարանաց. որպէս ընթեռնուք ի Գիրս Պատմութեան վկայելոցն, որ Արևելեայ ասէ գրոցն վերադրութիւն, զոր չարագրեաց երանելի Խոստովանողն Քրիստոսի Աբրահամ

ի գեղջէն Աբաճոյ,* որ էր աշակերտ և հետևող սրբոց Ղևոնդեանց, և պահատուց քան թէ յոլովից գրեաց անուանաւ ի յիշատակարանի անդ, զՀահդոսդ, որ թարգմանի արքայասէր, և զԳոհշթասդ, որ թարգմանի ներկագործ ծիրանեաց արքայական զգեստու, և զՇմաւոն եպիսկոպոս, վէմ եկեղեցւոյ Քրիստոսի, ընդ նմին և այլ եպիսկոպոսք և քահանայք արք ճ, որ կատարեցան միանգամայն սրով ի միում աւուր ի մեծի ուրբաթի զատկին»: (Թովմայի վարդապետի Արծրունեաց Պատմութիւն Տանն Արծրունեաց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 64—65):

—Ցայսմաւուրքը Հահդոսին անուանումէ Սադովիկ: Ահա Ցայսմաւուրքի պատմածը:

—«Մեհենիկ ԹՒ և վեցտվարի ԹԼ. Վկայաբանութիւն Սադովիկայ եպիսկոպոսին:—Ցամս կռապաշտ թագաւորին Պարսից Շապհոյ էր սուրբն Սադովիկ, եպիսկոպոս քաղաքին Սալիքայ և Տիզբոնայ, Եւ ի միում դիշերի ետես յերազի զսուրբն վկայն Քրիստոսի զՇմաւոն եպիսկոպոսն Պարսից՝ զայրն փառահեղ որ նախ մարտիրոսացաւ: Զնա ետես Սադովիկ կանչեալ ի վերայ սանդղոց, որ կոչէր զնա և ասէր. Ե՛լ Սադովիկ, ել աներկիւղ ընդ սանդուխք քո և ել առ իս: Եւ զարթուցեալ Սադովիկ՝ գիտաց որ ի մարտիրոսութիւն կոչէր զնա սուրբն Շմաւոն. և երթեալ երևեցոյց զինքն արքային: Եւ առ ժամայն կապեցին զնա և ընդ նմին այլ քրիստոնեայս ՃԻԼ անձինս ընդ այր և ընդ կին, և արկին զամենեսեան ի բանտ: Եւ նեղէին զնոսա սովով և ծարաւով և տանջանօք ի բանտին ամիսս Ե՝ և ոչ կարացին դարձուցանել զսուրբն ի հաւատոյն Քրիստոսի: Եւ յետ բազում տանջանաց՝ հանին զնոսա արտաքոյ քաղաքին և հանին զգլուխս ամենեցուն ՃՃԻԼ-ից: Եւ զսուրբն Սադովիկ տարան ի Ռիզլապատ քաղաք և անդ հատին զգլուխ նորա ի շաբաթի ԹԼ, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է օրհնեալ յաւիտեանս ամէն» (Գիրք որ կոչի Ցայսմաւուրք... ի Թըւին Հայոց ՌՃՀԹ. (=1730), էջ 378):

* Աբրահամ Խոստովանողը չէր «ի գեղջէն Աբաճոյ», ինչպէս որ թիւրիմացութեամբ ասում է Թովմա Արծրունին, այլ «ի գաւառէն Ցայոց, ի գեղջէն» որում անուն էր Ջինակ», Աւելի մանրամասն տես Ցառաջաբան:

— Լիակատար Վարք Սրբոցն էլ ունի գրեթէ նոյնը, ինչ որ Ցայսմաւուրքը, միայն յաւելուածներով Աեմմաենուց. «Սադովիկ կամ Հահդոստ եպիսկոպոս... և յետ հինգ կամ եօթն ամաց սովու և տառապանաց՝ կատարեցան ամենեքին սրով, իսկ սուրբն Սադովիկ վարեցաւ ծանր կապանօք ի Խուժաստան և գլխատեցաւ յամի 342 ի Ռեթլապատ, որ և Լապէտ քաղաք: Հ. վեռը. 18. Ց. Լ. 20: Եւդ. Աաորի:» (Լիակատ. Վ. Սրբ. Աւգեր. Վենետ. 1815, հատ. ԺԲ, էջ 335—6:)

Ե·

[A 450v B 391]

ՎԿԱԾՈՒԹԻՒՆ ՔՆՐՑ ՇՄԱՒՈՆԻ՝ ԹՆԴՐՈՒԱՑ ԵՒ ՔՆՒՆ ԻՒՐՈՑ ԵՒ ԱՂԱՂՆՈՑՆ։

Ի ժամանակին յայնմիկ իբրև փառաւորեցաւ Շմաւոն վկայութեամբ՝ դէպ եղև հիւանդանալ տիկնոջ տիկնոջ։ Քանզի միաք իւր ի Հրէայն՝ Թշնամիս խաչին՝ խոնարհեալ էին, սկսան չարախաւսել որպէս սովոր են և ասեն, թէ Քրիքն Շմաւոնի արարին քեզ կախարդինս վասն այնր, զի զՇմաւոն սպանին։

Հասին բանքն յարքայ։

Հրաման ետ ունել զԹնդրուս հաւատաւոր և զքոյր նորա աշխարհավար, որ ա\պա և նա ի հաւատս կացեալ էր, և զազախին մի նոցուն հաւատաւոր, որ ի մանկութենէ աշակերտ եղեալ էր ի բարւոք վարդապետութեան Քրիստոսի։ Ցարան զնոսա ի ձեռն տիկնոջն հարցանել։ Ցղեաց զմնդպետան մեծ և երկուս ի նախարարացն՝ երթալ հարցանել, կալ յիւրացն ի վերայ ձշմարտիւ։

AB վկաւութիւն քերց Շմաւոնի Թերբուա եւ քեռն իւրո եւ աղախնոյն։

2 B վկաւութեամբ AB դեպ 3 AB ի հրեայն 4 AB խոնարհեալ եին AB որպես 5 AB թե 6 B յիմ այնը 7 AB յարքա 10 AB կացեալ եը 11 AB ի մանկութենե AB եը B ի բարեաք 14 A յիւրացն վերայ B յիւրացն ի վերա

Իբրև ածին զկանայն առաջի նոցա՝ տեսին, զի գեղեցիկ էր տեսլեամբ և վայելուչ հասակաւ, քան զամենայն կանայս, սուրբ և առաքինին Թերբուս։ Եւ անդէն վաղվաղակի երեքեան զմի խորհուրդս ազտեղիս սկսան խորհել զնմանէ ի սիրոյ իւրեանց\և միմեանց ինչ ոչ յայտնեցին։

Սկսան պատուհասել զնոսա խիստ բանիւք, եթէ Մահապարտ էք, զի իշխեցիք մոտաբերել և առնել կարդինս բամբշանն, որ է տիկնոջ տիկին Արևելից։

Պատասխանի ետ սուրբն Թերբուս և ասէ. Ընդ՞ը կուտէք ի վերայ մեր եպերանս աւտարոտիս, որ հեռի են յուսմանէս մերմէ, և զի՞ մեզաք ձեզ, և զի՞ զրպարտէք վասն իրացդ, որ աւտար են ի ձշմարտութենէս մերմէ։ Եթէ արեանս ինչ ցանկայք ըմպել, ո՞վ արգելու զձեզ, զի ոչ ըմպէք համարձակ։ Եթէ մահու մերում սպասէք, ահա հանապազ շաղախեալ են ձեռք ձեր։ Այլ մեք քրիստոնեայք մեռանիմք և ուրանալոյ ինչ հնար չիք, քանզի յաւրէնս մեր գրեալ է, զի զմին միայն Աստուած պաշտեսցուք, և զայլ ոք ոչ զուգեսցուք ընդ նմա, ոչ զարարածս և ոչ զպատկերս, որ ինչ յերկրի կամ յերկինս իցեն։ Եւ վասն կախարդութեան գրեալ է ի գիրս մեր, ասէ, թէ գոյր ոք ի կախարդութեան՝ մեռցի ի ձեռաց ժողովրդեանն։ Եւ արդ զիարդ էք, զի մեք կախարդինս առնէաք, զի կախարդութիւն և

17 AB եը B վաելուչ 18 AB Եւ անդեն 20 AB զնմանէ B յիմ ինչ 22 AB եթե 23 AB եք 24 A բամբշանն որ ե B բամբշանն որ ե 25 AB ասե ընդեր կուտեք ի վերա 27 AB յուսմանես մերմե AB զրպարտեք 28 A երաւտ B երացտ AB ի ձշմարտութենես մերմե 29 AB եթե B ընբել 30 A ըմպեք B ընբեք AB եթե 31 AB սպասեք 32 B ուրանալո 33 AB յաւրենս AB գրեալ ե 37 AB գրեալ ե AB ասե թե 38 B յիմ և 39 AB ե AB առնեաք

ուրացուԹիւն Աստուածոյ ընդ մի համարեալ են, և վասն երկոցունց մահ սպառնացեալ է:

Լսէին ախորժելով անաւրէնն դատաւորքն պրանս երանելւոյն և զարմանային ընդ գեղն ցանկալի և ընդ համեստուԹիւն բանիցն զոր խաւսէր: Եւ վասն սնոտի կարծեացն իւրաքանչիւր խորհրդոցն չարաց, զոր ունէին ընդ նմանէ, այնպէս ասէին ընդ միմեանս, ԹԷ Ես սպրեցուցանեմ ի մահուանէ և առնում ինձ կնուԹեան:

Ասէ մոգպետն. Վասն մահու եղբաւրն ձերոյ առ զայրուցաս նախանձու զաւրինաւքն ձերովք անցէք և արարէք կախարդինս սիկնոջն, ԹէպԷտ և ոչ է ձեզ իշխանուԹիւն առնել կախարդինս, որպէս ասացերդ:

Ասէ առաքինին Թեոդոռոս. Զի՞նչ ինչ չար եղև Շմաւոնի եղբաւրն իմում, զի վասն Աստուածոյ մեռաւ, ԹէպԷտ և դուք առ ասելուԹեան և նախանձու սպանէք զնա, այլ նա կենդանի է յաւրքայուԹեան երկնից, որ խափանելոց է զձեր երկրաւոր աւրքայուԹիւնդ, և բառնալոց է զձեր պատիւ և զիշխանուԹիւն:

Եւ յետ այսց բանից առաքեցին զերեքեան ի բանդ, և պատուիրեցին պահել զդուշուԹեամբ:

Ի վաղիւ անդր յղեաց մոգպետն առ Թեոդոռոս, եԹէ Ես կնդրեմ յաւրքայէ և սպրեցուցանեմ զքեզ ի մահուանէ, Թէ առնուս յանձն լինել ինձ կնուԹեան:

Իսկ առաքինին իբրև լուաւ զբանսն, խռովեցաւ և ասէ. Ծէյ զբերանդ, այ անաւրէն և Թշնամի Աստուծոյ, և մի՛ ևս յաւելուր սիղծ բանս խաւսել, զի

40 AB այ 41 AB և 42 AB լսեին AB անաւրէն 43 B երանելոյն AB զարմանային 44 AB խաւսեր 45 AB ունեին 46 AB չնմանե այնպէս ասեին AB Թե 47 AB ի մահուանե 48 AB առե B ձերո 49 AB անցեք 50 AB արարեք AB ԹեպԷտ եւ ոչ է 54 A սպանեք B սպանէք 63 B բբանսն

ոչինչ է անկանելոց ապտեղի բարբառդ ի սուրբ յականջս իմ, և չիք մուտ քո բանիդ ի խորհուրդս զդաստամբ ցեալս, զի ես Քրիստոսի կամ ի խաւսման, և ի նորա անուն պահեմ զկուսուԹիւնս, և ի նորին յոյսն հաստատեմ զձշմարտուԹիւն անձին իմոյ, և նմա յանձն առնեմ զկեանս իմ, որ կարող է փրկել զիս ի պղծալից A 45 IV ձեռաց ձերոց և յանաւրէն խորհրդոցդ, զոր խորհիքդ զինէն: Ո՛չինչ երկնչիմ ի մահուանէ, զի նովաւ հոգիդ դէք դուք ինձ զճանապարհն, երԹալ տեսանել զինձ զսիրելի և զցանկալի եղբայրն իմ զՇմաւոն եպիսկոպոս, և մխիԹարիլ յամենայն վշտացս և ի նեղուԹեանցս, զոր տեսի յետ նորա:

Եւ այն ևս երկու նախատրեքն գազատ ի միմեանց յղեցին առ նա վասն նորին իրաց, և նա նոյնպէս բանս խիստս և պատգամս գժիւս յղեաց անդէն:

Ապա երեքեան միաբանեցան ի մի խորհուրդ դառնուԹեան, վկայեցին սուտ և խաւսեցան զանաւրէնուԹիւն, ասեն. Արդարև կախարդ գտան:

Առաքեաց և աղքայ պատգամ առ նոսա, ասէ. Թէ արեգական երկիր պագանէք, ոչ տամ սպանանել: Քանզի աճ զմուտս, ասէ. Թերևս չգիտիցեն կախարդինս, և զուր բաղայս զնիցեն ի վերայ:

Պատասխանի եւտուն և ասեն. Մեք զձշմարիտ Աստուածն մեր ընդ արարածոցս ոչ փոխանակեմք, և զերկրպագուԹիւն արարչին՝ արեգական ծառայակցին մերոյ ոչ մատուցանեմք, և զվերիչն մեր Քրիստոս վասն ահեղ սպառնալեացդ ոչ կարեմք ԹողուլԷ:

Յայնժամ մեծաբարբառ ընդ մի բերան ասեն մոգքն. Կորիցեն կախարդք ի ներքոյ երկնից, զի դոքա արարին կախարդինս սիկնոջն, և վասն այնորիկ խաւԹացաւ: B 39 2V

67 B սպատասցեալս 69 B հաստատեմ 73 AB եկընչիմ 90 B ծառայակցին

Ապա ել հրաման յարքունուսա, թէ պինչ մահու և կամիցին սպանցեն զնոսա մոզքն: Քանզի ասէին, թէ Տարել պարտ է զնոսա, և անցցէ սիկինն ընդ մէջ և ոչ-
Ջանայ:

Իբրև հանին զնոսա տանել ի մահն, դարձեալ յղեաց մոգպետն առ Թերբուս առաքինի և ասէ. Թէ լսես բանիցն զոր ասացի՝ ոչ դու մեռանիս և ոչ ընկերդ քո:

Իսկ սուրբն մեծաձայն բարբառով սկսաւ դնել Թըշնամանս, ասէ. Ա՛յ պիղծ և ապեղի, պի՞ յանդգնեալ կատաղեալ ես վասն անարժան և անաւրէն [իրացն]. ես քաջանուն մեռանիմ, քանզի դիտեմ եթէ մեռանելոց եմ, և վատանուն ոչ առնում յանձն կեալ:

Ապա հանին զերեքեան զսուրբսն արտաքս քան զքաղաքն, վարեցին երկու ցից միում միում և հարստուցին զոտան ընդ մի ցից և զգլուխն ընդ մի, որպէս աւրէն է աշխարհի պրկել զոչխարան ի կատուբս: Առին սղոց և սկսան սղոցել զմարմինսն, և կարեցին արարին վեց մասն, և եդին զկատուբսն ի վեց կողով, և կախեցին զվեց ձողոց, և ցցեցին զձողերսն երեքեան ի միջէ կողմանէ ճանապարհին, և գերիսն ի միւսմէ:

Ոզքա էին կէսք խաչելոյ, պի՞ ոչ խաչն կատարեալ և ոչ մարմինք խաչելոյն բաւանդակ ի խաչին, այլ էր տեսիլ դառնութեան, որ պիրան Թաւիէր և զաղիան գելոյր:

A 452 Ո՞վ էր, որ զայն տեսանէր և ոչ|լնոյր սգով, պի՞ սուրբ մարմինքն, որ սրբութեամբ մնալ էին ի սենեակս, յանարգանս և ի Թշնամանս մատնեցան, և ի մահու անդամ անդամ ցրուեալ ընդ երեսս դաշտացն: Որոց

97 B կամեցան 100 B դարձել 105 B յանդգնել կատաղեր 106 AB եւ անաւրէն աւրինացն 107 B Թե 108 B յիմ և 110 B յիմ և 112 AB սուրբ մարմինքն նորա սրբութեամբ

ոչ երբէք մատնեցաւ կամակար ազատութիւնն ազատութեանց, տուան պատուական անդամք նոցա ի Թըշնամանս:

Ցերբ լռեալ կայցես արդարակշիռ ստուգութիւնդ, որ յորժամ խնդրէ վրէժ՝ ոչ առնու ողորմութիւն և քաւութիւն: Ցերբ մեծամտեալ լիցի հպարտութիւնն, [որ] յորժամ բեկանի այլ ոչ և պ բժշկի:

Ոզքա են անազորոյնք և անողորմք, անդուլթք և անարգահատուք, որ զմարդկան կերպարանս փոխեցին և գիշակեր գազանաց նմանողք [եղ]են: Ոզքա են մարդակերք, որ կլանեն կենդանւոյն, ըստ այնմ որ գրեալն է, Թէ կենդանւոյն կլանէին զմեզ:*

Որո՞ւմ արդեաւք քաղցրացաւ այն տեսիլ դառնութեան, կամ ո՞ք եղև ուրախ ընդ այն աւձիրս բարկութեան: Ո՛վ արդեաւք լի ականջ կարէր հայել և տեսանել զանհնարին ազէտսն, բայց եթէ քարեղէն ոք էր և ոչ յոսգէ մարդկութեանս:

B 393 Ածին զսիկինն ի ճանապարհն, և անցուցին ընդ մէջ յաւշելոյն, և ամենայն բանակն զկնի նորա, քանզի չու էր արքունի:

Պատկեցան առաքինիքն ի հինգերորդումն Ահեկանի ամսոյ, ըստ լուսնաթիւոյ, ի վառս Քրիստոսի Աստուածոյ մերոյ, որում վայր յաւիտեան, ամէն:

* կենդանւոյն կամեցան կլանել զմեզ. Սաղ. ճիգ. 3. կայսր զնա կենդանւոյն իբրեւ դժոխք. Առակ. Ա. 12.

125 AB երբեք 129 AB խնդրե վրեժ 131 AB բժըշկի 134 A նմանող են B նմանողք են 138 B յիմ կամ ո՞ք եղև ուրախ ընդ այն աւձիրս բարկութեան 139 AB կարեցէ հաել 145 B ի հինգերորդումն

Ջ.

[Վ կայեցին և այլ սուրբ արք ճ և կանայք ի ի ամսոյ։]

Տես էջ 3, տող 27—28։ Այս գլուխն էլ կորած է և մեզ չէ յաջողուեց գտանել։

Լ.

[A 445 B 385v]

ՎԿԱԾՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՑՆ ԳԵԶԱՆԴՈՒՏՈՑ Ի ՔԱՂԱՔԻՆ ՈՐ ԱՆՈՒԱՆԵԱԼ ԿՈՉԻ ԲԵԹՈՒԼԱՔ, ԳԱՇԹԱՐՀԻՆ ԳԵՐՄԱՆԱՑՒՈՑ։

Վասն զի միշտ յարուցանէ զփորձուԹիւն իւր սատանայ ի վերայ մանկանց եկեղեցւոյ, գտեալ իւր արբանեակս ըստ կամաց իւրոց, որք ոչ դադարեն կռուել ընդ հաւատիս Քրիստոսի, զի նոքաւք քննեսցին և սրբեսցին իբրև զոսկի ի բովս, և իբրև զարծաԹ զտեալ։ Զի ընդ ժուժկալուԹիւն սրբուԹեան նոցա ուրախասցին հրեշտակք, և զարմասցին մարդիկ, և ամաչեսցէ Թշնամին սատանայ հանդերձ իւրովք արբանեկաւք։

Եին ոմն առաքինի Գեզանդուխտ անուն ի Բեթուլաք քաղաքի, լի մեծուԹեամբ ըստ կարգաց աշխարհիս, և զարդարեալ իմաստուԹեամբ և հանճարով և շքեղ վարուք առաքինուԹեան, |ի վարս աստուածպաշտուԹեան պայծառ և փառաւոր, և պատուական քան զամենայն քաղաքակիցս իւր։

Դէպ եղև զի այր սորա գործակալ էր յառաջ

B ՎկաբանուԹիւն սրբոյն յԳեզանդխատ ի քաղաքին որ անուանեալ կոչի Բեթուլաք յաշխարհին գերմանացւոց։

2 B եկեղեցւո 7 B մարդիկք 8 արբանեկաւք իւրովք 9 A յմի անուն A |ի բեթուլաքաղաքի B յնչուած է խոնաւուԹիւնից մաղաի անուրը։

Շրդանու արքայի ի Ինդաբու քաղաքի, և մեծութիւն բազում ստացեալ ունէր ի գործակալութենէ անտի: Եւ իբրև յոյժ ճոխացեալ էր ի մէջ ընկերաց իւրոց, ամբաստան եղեն զնմանէ ընկերք իւր՝ ճոխք քաղաքին՝ առ Թագաւորն, չարախաւսելով զնմանէ վասն իրաց ինչ իւրեանց: Եւ Թագաւորն ունկնդիր եղեալ բանից նոցա, մատնեաց զնա ի ձեռս նոցա, զի առցեն ի նմանէ զվրէժ չրկանաց իւրեանց: Իսկ նոքա իբրև առին զիշխանութիւն ի Թագաւորէն, բազում պատճառանաւք զնա չարամահ սպանին:

Եւ իբրև մեռաւ նա և Թագեցին ըստ աւրինաց իւրեանց, կին նորա Ցեզանդուխտ ի սուգ նստեալ էր վասն նորա: Բայց ի միտս իւր խորհէր, թէ սրբութեամբ պահեսցէ զմարմին իւր, և մի՛ ամուսնասցի ընդ այլում: Զգեցաւ խորգ, և արկ մխիթր, և սգայր զաւուրս բազումս, զի գիտացէ ամենայն մարդ, թէ ոչ կամի ամուսնանալ ընդ առն այլում, և ոչ փոխանակել զսէր առն իւր ընդ այլում: Զի թէպէտ և խորհէր որ ի մեծա|մեծաց և յղեր առ նա, զի առցէ զնա ի կնութիւն, ոչ առնոյր յանձն ամենևին:

Եւ քանզի էր ինքն պատուական և մեծութեամբ և իմաստութեամբ և գթաստութեամբ, և ոչ դոյր իւր զաւակ որ ժառանգէր զստացուածս իւր, մոգպետ քաղաքին Ինդաբու, որում անուն էր Աւշնասպա, կամեցաւ առնուլ զնա իւր կնութեան. քանզի տեսանէր զտուն նորա ամենևին պայծառ մեծութեամբ, և զի ոչ դոյր նորա որդի որ ժառանգէր զստացուածս նորա:

Մոգպետ քաղաքին Ինդաբու յղեաց առ նա

16 AB աբքան B քաղագի 17 B անդի 27B նոցայ 32—33 B ի՛մ և ոչ փոխանակել զսէր առն իւր ընդ այլում 38 AB ժառանգէր B մոքպետ 42 AB ժառանգէր 43 B մոքպետ

ի ծածուկ, թէ Լեր կին ինձ ի կնութեան, և տան քում ես բարւոք առաջնորդեմ, և ունիմ խնամ ամենայն արարած քոց, և պիրս քո բաւանդակ ողջ և կանգուն ունիմ:

Իսկ երանելին Ցեզանդուխտ, որպէս վայել էր սրբութեան իւրում, ամենևին ոչ առնոյր յանձն, այլ բանս խիստս և կսկծելիս յղեր անդէն և ասէր. Զի այր իմ մեռաւ և ես այրի մնացի, յայն տեղի հասի. մինչև առ քեզ, պիղծ շուն, մի՛ խոնարհեցուցից զպատիւ իմ: Ես եթէ կամ էր ինձ և ցանկայի երկրակեաց կենացս, այնմ լինէի, որ ինձ արժան էր, ոչ թէ իբրև զքեզ ապտեղոյ: Զի ես եմ կին նազաւրացի և աղախին Քրիստոսի, և զոս մոգ մի զևս հեթանոս: Եւ իմ իսկ եղեալ ի մահ, եթէ մինչ ցմահն իմ յայրութեան կացից և նովին սգով երթայց առ այրն իմ:

Իսկ զառնաշունչ անաւրէնն իբրև լսէր զայս, խոցէր ի սիրտ իւր, և քինայր ընդ նմա առաւել ևս վասն բանից Թշնամանացն, զոր առաքեաց առ նա: Գնաց առ աբքայն և եղև չարախաւս զնմանէ, և խաւսէր|չարիս, զոր չէր արժան. եթէ կին մի Ցեզանդուխտ անուն, որոյ այրն վնասակար գտաւ յարքունիս, և ձոխք քաղաքին սպանին զնա, արդ կին նորա նազաւրացի է, և խոստովանի զինքն քրիստոնեայ, և խորգ և մխիթր արկեալ է իւր, և միշտ պահաւք խնդրէ յԱստուծոյն իւրոյ չարութիւն ի վերայ Թագաւորութեան քո, զի վրէժ առն իւրոյ ի ձեռաց քոց խնդրեսցէ:

Իբրև լուաւ զայս արքայ՝ բարկացաւ յոյժ, և խռովեցաւ դառնապէս, և առաքեաց նա առ սուրբն Ցեզանդուխտ և ասէ ցնա, թէ Զի՞նչ է այս զոր լսեմ վասն քո, եթէ զի հրամայեցի սպանանել զայրն քո

45 բարւոք 46 AB կանգուն 57 B ըզմանն 58 B և տալին 64 B մողք քաղաքիս 66B քրիստոնեա 72 A ըզնա

վան չարութեան իւրոյ, դու ի վերայ խորդոյ և մոխրոյ
նստիս և վինէն ամբաստան մատուցանես Աստուածոյն
քո, և խնդրես ազաւթիւք զվրէժ արեան առն քո՝ զի
Աստուածն քո չինէն առեալ: Բայց արդ երթ ի բաց
փոխեա ի խուլ խորհրդոյ քոյ, և թող ի բաց զպաշ-
տաւնն քո, ապա թէ ոչ երդուեալ ի մեծ աստուածն
Արամազդ և ի բախտ եղբաւր իմոյ Շապհոյ արքային,
B 386v եթէ ոչ դառնաս ի խորհրդոյ այսի, և ի բաց թողուս
զսուգ քո, և երկիր պագանես արեգականն, հրաման տամ
ի վերայ քո, զի չարաչար տանջանաւք և դառն մա-
հուամբ հասցես առ այրն քո:

Ապա երանելին Ցեզանդուխտ իբրև լուաւ զպատ-
գամն թագաւորին՝ ասէ. Թէ Իմ սուգս, և խորգս, և
մոխիրս ոչ թէ վասն թագաւորութեան քո է, այլ վասն
մահուան առն իմոյ, և ոչ եմ ամբաստան զքէնն, քանզի
եթէ ամբաստան լինիմ ես զքէնն՝ մեղք լինին ինձ Աս-
տուածոյն իմոյ. զի գրեալ է, թէ Ազաւթս արարէք
ի վերայ երկրաւոր իշխանաց ձերոց*, և դու աէր ես իմ
մարմնաւոր, և յամենայն ներողութեանց և ի թշնամեաց
մերոց զմեզ և զգաւառս մեր դու պահես, և երկիրս
մեր և ջուրս՝ որով կեամք՝ քո է. և ով եմ ես, շուն
մի անարգ, եթէ ի մոխ զլուխս վինէն զայսպիսի իրս:
Այլ ես նազաւրացի եմ ձշմարտութեամբ, և չեն մեր
աւրէնք խնդրել չար ի վերայ թշնամեաց, թող թէ ի
վերայ սիրելեաց, մանաւանդ ի վերայ տերանց և իշխա-

* Ծառայք՝ հնազանդ լերուք տերանց ձերոց (մատն. Եփես. Ջ. 5. ?

74 B չարութե՛ն 77 B յիմ երթ 78 A փոխեայ 80 A Ճա-
պհո B Շապհո 81 A եթե ոչ առնես B և ի բաց ընկե-
նուս 83 B յիմ ի վերա քո 87 B յիմ (քո) ե 89 A յայն
B յայ 91 AB տեր 93—94 A եւ զերկիրս մեր և զջուրս
որով կամք քո ե

նաց: Այլ զի նախեմ ես ի վերայ խորդոյ և մոխրոյ,
որպէս աւրէն է ինձ վասն մահուան առն իմոյ ոգամ,
և այսպէս եղի ի մոխ իմում, եթէ ոչ եղէց առն և ոչ
մխիթարեցայց մինչև յաւրն, յորում տացէ ինձ Աս-
տուած տեսանել զայրն [իմ] յայնմ աշխարհի:

Ցայնժամ իբրև լուաւ արքայ՝ լի եղև բարկու-
թեամբ և հրամայեաց ժոգպետին Աւշնասպայ, զի եր-
թիցէ ի քաղաք նորա և հանցէ զնա և չարչարեսցէ բա-
զում նեղութեամբ. և ասաց ցնա, եթէ Թո՛ղ ի բաց
զսուգ քո և երկիր պագ արեգականն. ապա թէ ոչ հա-
ւանեսցի քեզ, հանցես զնա և զպաշտաւնակիցս նորա
զարս և զկանայս, և անդէն ի նմին քաղաքի քարկո-
ծեսցես:

A 446v Ապա իբրև եհաս զհրամանս զայսպիսիզ ժոգպետն
Աւշնասպ՝ ել խրոխտալով յերեսաց թագաւորին, և
վասն զի ունէր ոխս վասն թշնամանացն, հան զնա
ի քաղաքէն չարաչար թշնամանաւք և տանջանաւք և
դառն լկանաւք, բոկ և հեծի, կապեալ զձեռս յետս, ձա-
ղելով և հարկանելով, զի արասցէ անարգանս մեծու-
թեան նորա:

Ասէ ցսուրբն Ցեզանդուխտ. Թո՛ղ ի բաց զպաշտաւն
քո, և արա զկամս թագաւորին, և պագ երկիր արե-
գական:

Պատասխանի ետ սուրբն Ցեզանդուխտ և ասէ ցնա.
Պիղծ և անաւրէն, զայս ամենայն չարչարանս և անար-
գանս որ հասուցեր դու ինձ, վասն զի ոչ կատարեցի
զկամս քո, այլ ինձ աւրէն լինի մեռանել վասն անուանն
Քրիստոսի, քան առ ժամանակ մի վայելել ի մեղս:

105 B մոգպետին AB աւշնասպա 107 A ըզնա
B տար ծող խոնաւութենից կիսեղծ, բայց ընթեռնլի. 112 AB եաւ
116 A ձեռս 118 A նորայ 119 AB ըզսուրբն 126
A վաելել զմեղս B վաելեալ ի մեղս

Ասէ ցնա անաւրէնն. Հպարտութիւն քո և ամբարտաւանութիւն և խիստ խաւսք քո ածին զքեզ ի յայդ անարգանս, և եթէ ի դմին կայցես՝ չարաչար տանջանաւք դառն մահու դիպեսցիս:

Պատասխանի ետ երանելին և ասէ. Արհամարհեմ և առ ոչինչ համարիմ զանձկանս քո, զոր ածեր ի վերայ իմ, և սկայաբար քաջութեամբ մարանչիմ ընդ B 387 հաւրն քում սատանայի. և արհամարհեմ զ|հրամանս թագաւորին քո, և ուրախութեամբ սրտի զուարճացեալ եմ ի խոստովանութեանս իմում, որ վասն անուան Քրիստոսի:

Եւ իբրև ոչ հաւանեցաւ ի վերայ այն չարչարանացն, և ոչ էառ յանձն երկիւր պատանել արեգական՝ զի ամբոխ էաս մարդկան ամենայն քաղաքին էլեալ էին ի տես սրբոյն՝ |դարձեալ հրաման ետ անաւրէնն, զի վերանելին Չզանդուխտ |տաբեալ |անցուցանիցեն առ դրաւք ապարանից իւրոց, և ցուցցեն նմա զամենայն արարս նորա, և զբազմութիւն ծառայից նորա և զաղախնանց, զի հանցեն առաջի նորա, զի տեսանելով զբազմութիւն ստացուածոց նորա, հաւանեսցի լինել նմա կնութեան:

Այլ առաքինի նահատակն իբրև տեսանէր զայն ամենայն, առ ոչինչ համարեալ ասէ ցանաւրէնն| առաջի ամենայն բազմութեան քաղաքակից իւրոց, որք ժողովեալ էին ի տես սրբոյն. Այս ամենայն մեծութիւն, որ ցուցեր դու ինձ, համարեալ է ինձ որպէս զաղբ և որպէս զխաւ գոմհոյ կոխեալ ի կձղակաց անասնոց, իշանց և խոզից:

Եւ դարձեալ ասէ երանելին ցմոգպետան |անաւրէնն.

155 Ընդ սիրոյն Յեսուսի Քրիստոսի զոչինչ համեմատեմ ես զաշխարհիս այսմիկ. զի ոչ բազմութիւն ծառայից և աղախնանց, և ոչ շատութիւն ոսկւոյ, և ոչ գեղեցկութիւն ապարանից, և ոչ վայելչութիւն պէսպէս զարդուց, և ոչ պայծառութիւն լուսաւորաց, ոչինչ 160 համարեալ է առ սիրոյն Քրիստոսի, որում սպասեալ ակն A 447 ունիմ:| Բայց քեզ որ ինչ հրամայեալ է վասն իմ արա վաղվաղակի և մի՛ հեղգար, զի ես ոչ առնեմ զհրամանս նորա և զԱստուածն իմ ոչ ուրանամ:

Զայս իբրև լուաւ անաւրէնն մոգպետան՝ բարկացաւ սաստկապէս, և զոյն երեսաց նորա եղծաւ ի դառնութենէ սրտին, և իլկեալ առ յաւսման հրամայեաց հարկանել զնա և հանել արտաքոյ քաղաքին: Հրամայեաց մերկացուցանել ի նմանէ զհանդերձս նորա:

Այլ երանելի նահատակն յորժամ ելանէր ի տանէ իւրմէ, խորհեցաւ ի սրտի իւրում և ասէ. Հաստատեալ դիտեմ ես յանձն իմ, եթէ քարկոծելով քարկոծեն զիս. էաւ զսփածանելին և ածաւ զմիջով իւրով ի վերայ առականաց իւրոց, ի ներքոյ ղեհաստաւ իւրոյ:

Եւ |հրաման ետ անաւրէնն զերծանել |ի նմանէ զարկանելիս իւր, և մրմռեալ կրճտէր զ ատամունս իւր առ չարութեան բարոյիցն. և վասն ախտալից կամացն ետ հանել զշապիկս նորա, և տեսին զի ատուիս էր զգեցեալ ի ներքոյ շապկին, ի վերայ մերկոյ մարմնոյ իւրոյ: Եւ զայն ևս հրամայեաց հանել ի նմանէ, զի մերկ, խայտառակ B 387v ոտիւք կացուսցեն զնա ի մէջ ամբոխին, զի արասցեն| նմա ձաղանս մեծ, և յադեցուսցէ զախտալից սրտմտութիւն իւր:

127 A ըզնա 133 AB ակաւաբար B յիմ քաջութեամբ ABմարտանչիմ 134 AB սատանայի 135 AB քում 136 B ի խոստովանութիւս 138 A չարչարանաց 139 AB եառ 141 B դարձել 143 B ցուցեն 144 B յիմ նորա 148 A եւ ասե 152 B կոխել

156 A աչխարհիս 158 B վախճութիւն 159 A ոչինչ B ոչ ինչ 163 B զա՛ծ 166 B փղցեալ 167 B արտաքո 172 B եառ սփածանելին 173 B յիմ իւրոց B սգեստաւ իւրո 175—176 B առ չարութի՛ քարոխն 177 B սգեցեալ 178 B ի վերա մերկո մարմնո իւրո 181 B տրտմութիւն իւր

Աղաղակեաց սուրբն ի ձայն մեծ և ասէ. Ո՞չ ամա-
չէս պիղծ դև գարշելի, անողորմ խաւարային. եթէ
185 զոր ինչ ինձս կամեցար առնել խայտառականս, մաւրդ
և կնոջ քո և քեզ քո առնես ձաղանս մերկացուցա-
նելովս զիս, քանզի և նոցա այս բնութիւն է զոր ես
ունիմ: Եւ զի այսչափ ծարաւի է բարկութիւն քո առ
իս,—հանեալ զսփածանելին իւր ինքնին զոր ունէր ընդ
190 մէջ իւր, ձգեաց և եհար զերեսս նորա և ասէ.—յա-
գեա, ո պիղծ և ամենաչար: Ես մերկ եկի յորովայնէ
մաւրիմոյ, և մերկապարանոց մերձենամ ի վկայութիւն
Տեառն իմոյ:

Եւ զայս իբրև ասաց սուրբն, տեառնագրեաց զանձն
195 իւր, համբարձ զձեռս իւր յերկինս և ասէ. Տէր տե-
րանց, աստուած աստուածոց, արարիչ ամենայնի, երևե-
լեաց և աներևութիւց, դու հայեա և տես զնախատինս
ձաղանաց իմոց, և զչարչարանս տանջանաց իմոց, զոր
հասուցին ի վերայ իմ հալածիչք իմ: Դու Տէր ընկալ
200 զհոգի իմ և խառնեա զիս ի թիւ սրբոց քոց, և ար-
ժանի արա զիս Տէր Քիստոս ի գալստեանն քումմ ար-
քայութեան քո:

Եւ զայս իբրև ասաց, կապեցին զձեռս նորա ի ներ-
քոյ ծնկաց նորա, և նստուցին զնա առաջի քարկոճչաց
20[5] իւրոց, և հրաման ետ անաւրէնն, զի ամենայն մարդ
A 447v ընկեսցէ քար ի վերայ նորա, և արարին քարա|կոյտ մեծ
ի վերայ նորա:

Եւ այսպէս կատարեաց երանելին Զանդուխտ
զվկայութիւն իւր ի Քրիստոս:

210 Բայց յորժամ կալան զերանելին, կալան ընդ նմա

184 B պիղծ դու եւ գարշելի 189 B գսփածանելին
195 A տ՛ր տ՛ր 197 AB հաեա 198 B յիմ (տանջանաց)
իմոց 201 B ի գալստեան A յաւրքայութեան B յաւրքա-
ութեան

և զայլ ոմն կին հաւատաւոր զազգական նորա, որ խոստո-
վանէր ասելով, թէ Եւ ես քրիստոնեայ եմ, զոր ընդ նմին
իսկ քարկոծեցին: Եւ ի ժամ վկայութեան նորա, մինչդեռ
տանէին զնոսա քարկոծել, ծարաւեցաւ և խնդրեաց ջուր:
215 Իբրև լուաւ զայս երանելի նահատակն Զանդուխտ՝ լի եղև
սրտմտութեամբ ի վերայ նորա և ասէ. Ի վերայ աղբերց
ջուրց կենդանութեան հասեալ կամք, և յանսպառ
ըմպելին հրաւիրեալ եմք, և յերկնաւոր հարսանիսն եմք
կոչեցեալ, և դու զջուրս անցաւորս խնդրես. մի՛ լիցի
220 ընդ իս քարկոծութիւն քո: Եւ երդմնեցոյց և հաւա-
նեցոյց զդահիճսն, զի քարկոծեսցեն զնա ուրոյն ի նմա-
նէ: Եւ արարին դահիճքն ըստ կամաց նորա. քարկո-
ծեցին զնա յայլում տեղւոջ:

Եւ իբրև քարկոծեցին զնոսա՝ գնաց ամենայն ամ-
[225 բոխն յիւրաքանչիւր տեղիս: Գնաց և մոգպետն հան-
դերձ իւրովքն զաւրաւք: Իբրև երեկոյ եղև՝ աստուա-
B 388 ծապա|շտ մարդիկ, երկիւղածք Քրիստոսի, որ էին բնա-
կեալ ի քաղաքին յայնմիկ, չոգան ի գիշերի գաղտ, փու-
թով և երկիւղիւ հանին զմարմինս նոցա ի քարակուտէ
230 անտի ի դուրս, և ըստ աւրինի նոցա պատուով պա-
տուեցին, և ըստ կարգի քրիստոնէից եղին ի նմին
քաղաքի մեծարանաւք և պգուշութեամբ:

Կատարեցաւ վկայութիւն սրբոյն Զանդխտոյ, խոս-
տովանեալ զՔիստոս Քրիստոս զՏէր մեր, որում փառք
235 յաւիտեան:

212 B քրիստովնեա 216 A աղբեը 217 AB յանըսպառ
218 B յիմ և 220 B յիմ և 230 B անդի յիմ ի դուրս B և
ըստ աւրինաց 231 B յիմ և ըստ կարգի քրիստոնեից 233
A Եզանդքխտոյ 234 B փառք յա՛՛. ամեն:

Ը.

[A 452 B 393]

ՎԿԱԾՈՒԹԻՒՆ ԲԱՐԲԱՇՄԵՆԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՒ ՎԵՇՏԱՍԱՆ ԱՑԼ ԵՒՍ ՎԿԱԾԻՑ, ՈՐ ԸՆԴ ՆՄԻՆ ՎԿԱԾԵՑԻՆ։

Յամի վեցերորդի հալածանացն մերոց ելին չարաչար զԲարբաշմենայ եպիսկոպոսէ Սղակայ և Տիզբոն քաղաքի առաջի արքայի։ Ասեն. Այր մի է աստ ստամբակ, որ հանապազ հակառակ կայ ուսմանս մերոյ, և զբազում մարդիկ դարձուցանէ ի պաշտամանէ մոգութեանս և զատարկանուննս առնէ ի գործոյ արքունի։ Զարեգական անարդէ, կհուր և զջուր թշնամանէ։

Եհարց արքայ, թէ Ո՞ ոք է նա, որ զայն այնպէս իշխէ գործել։

Ասեն. Քեռորդի է Շմաւոնի որդւոյ Նաբաւտաներկայ, և ի նորուն տեղի զլուխ է քրիստոնէից։ Եւ իբրև լուաւ՝ ի ցասման եղև, և հրաման ետ ածել զառաջեաւ։

Զոգան կալան զԲարբաշմէն եպիսկոպոս և զվեշտասան ևս այլ ընդ նմա, որ էին երիցունք և սարկաւա-

B Վկաւթիւն բարբաշմենեա եպիսկոպոսի եւ վեշտասան այլ եւս վկաց որ ընդ նմին վկաեցին։

2 B եպիսկոպոսէ 8 B եթե 10 B որդւոյ 11 B քրիստոսմնեից 12 B յիմ ի (ցասման)

գունք և ուխտաւորք ի տեղեաց տեղեաց։ Եւ կէսքն անդէն ի նոյն քաղաքացն էին։ Տարան զերանելին Բարբաշմէն զառաջեաւ արքայի։

Արքայ ասէ. Ա՛յ մահապարտ, արժանի մահու, ընդէ՞ր զհրամանաւն մերով անցեր և իշխեցեր լինել գլուխ ուսմանն այնորիկ, զի ես առեամ զազգն, վասն զի անարգեն զաստուածսն մեր։ Եւ մանաւանդ զի և Շմաւոն ևս, որ իբրև զոգիս սիրէին, վասն այդր ուսման մեռաւ։

A 452v Պատասխանի ետ երանելին Բարբաշմէն և ասէ. Եթէ քում հրամանացդ անցաք, դու ամենևին իսկ զհաւատս մեր բառնալ կամիս յաշխարհէ, այլ որպէս ոչինչ թուլացաք ի ձշմարտութենէն, նոյնպէս և արդ առաջելիցեմք կալ ի ստուգութեանն հաստատուն։

Արքայ ասէ. Այր մի ստամբակ և անմիտ երևիս դու ինձ, և մահ խնդրես ըստ աւրինակի եղբարն քո, որ կորեաւ և կորոյս զբազումս։

Պատասխանի ետ երանելին և ասէ. Ես մահ ոչ խնդրեմ և ոչ փափագեալ ինչ եմ սպանման, եթէ զուղիղ ճանապարհ թողլ տաս ինձ գնալ, և զձշմարիտ ուսուցին վարդապետութեանն կատարել։ Ապա եթէ ախրաբար ի մոլորութիւնդ բանի կամիս դարձուցանել, խնդրեմ

B 393v զմահ, զի կեանք ինձ են, և ծարաւի եմ սպանման, զի ուրախութիւն իմ է։ Քաւ լիցի ինձ թողուլ զձշմարիտ հաւատս միոյն Աստուծոյ, զոր ետ ինձ յաւանդ հայրն իմ և պապեակն Շմաւոն։

Իբրև լուաւ պայս արքայ՝ ի ցասման եղև և երդուաւ յարեգական յաստուածն իւր և ասէ, թէ Ոչ տամ այդմ ուսմանդ շրջել ընդ երկիր, և անմի առնեմ

21 B զաղգան 23 B զոգիսերեկ 34-35 AB այսպէս՝ զուղիղ ճանապարհ 36 B կատարեալ B թե 42 B ի ցասման եղեալ յիմ և 44 A այդ B ուսման

յաւիտեան աշխարհէ։

Սկսաւ Բարբաշէն ծիծաղիլ և ասէ, թէ Զերկուս և զաստուածն քո՝ զՀուր և զՋուր՝ ընդէ՞ր ոչ յիշեցեր յերդմանդ ընդ արեգական, զի թերևս աւգնականութեամբ ամենեցուն կարող լինէիր անմի առնել զմեզ ի մարդկանէ։

Եւս առաւել բորբոքեցաւ ամպարիշտն ի ցասումն և ասէ. Զի զանձնդ ի մահ եդեր, վասն այնորիկ խաւսիս այդպէս, զի արդէն տաց զքեզ սպանանել։ Ոչ այդպէս, այլ պահեցից յահ և երկիւղ բազմաց ընդ յերկար տանջեալ, զի ամենեքեան՝ որ կայցեն յուսանդ յայդմիկ՝ զահի հարցին, յորժամ տեսանիցեն զպէսպէս նեղութիւնս քո և զմահն չարամահ, զոր ածից ի վերայ քո։

Եւ զայս ասացեալ հրամայեաց արկանել գնոսա ի բանդ ծանր շղթայիւք, և նեղել յանհնարին տանջանս, ի Մեհեկանի ամսոյ մինչև յաւրն իննն և տասներորդ Քաղոց ամսոյ։ Եւ հանապազ զանիւք և նեղութեամբ և ապգի ապգի տանջանաւք, և անհնարին գելոցաւք և քաղցիւ և ծարաւով կատէին գնոսա մոգքն անաւրէնք, մինչ զի մորթն միայն մնաց յոսկերս նոցա, և գոյն երեսաց նոցա ծղոյ նմանեցաւ ի բաղում ձգանցն, որով նեղէին գնոսա։

Ի ձմերոց արքայ ի Ղաբան քաղաք ի Խուժաստան խաղաց և առաքեաց ետ ածել զԲարբաշէն եպիսկոպոս և զվեշտասանսն, որ էին ընդ նմա կապանաւք։

Իբրև ածին հասուցին ի քաղաքն՝ մտին ցուցին արքային, և հրամայեաց ածել զառաջեաւ զամենեսեան։ Եւ ասէ. Ա՛յ քէշա անմիտ և ոչ իմաստուն, ո՞չ ձերոյն կամաւք ինքնակամ անկանիք ի մահ. սպառեցայք, անմարդացայք և ոչ թողէք զյամառութիւնդ ձեր. առա-

Ա 453 ջինքն ամենայն ո՞ր կին, որ կոտրեցան. ո՞ր են զի կեցին և թագաւորեցին, որպէս զի ասէինն, զի դուք ստիպեալ և նոցա նմանող էք։ Ահա մեռան և ոչ կեցին, որպէս ասէինն։ Արդ լուարուք ինձ և մի՛ անարգէք զհրամանդ, և կեայք և ոչ մեռանիք։ Եւ դարձեալ պարգևս և պատիւս գտանէք ամենեքեան ի մէնջ, և մանաւանդ զքեզ, Բարբաշէն, արարիչ այսաւր մեծ և ճոխ, եթէ լսէ և լուիցես բանից իմոց և երկիւղ պագցես ընդ իս արեգական։ Եւ վաղվաղակի եւս հրաման բերել բա-

Բ 394 ժակ մի ասկի ի հալաբ ակեղէ և ասէ. Այ էմ՛աւ զայդ, զի եղիցի քեզ ի պատիւ և ի պարծանս ամենեցուն, և դարձեալ բարձ և պատիւ տաց քեզ մեծի իշխանութեան։

Ասէ երանելին Բարբաշէն, զի Իբրև զմանուկ պատրես ի բանս արկանել, և դու իբրև զողայ մատաղ և թաւամի, յորդորես թողուլ զԱստուած, որ ոչ անցանէ, և նորա բանիւ եղև ամենայն, և նորուն հրամանաւ ստեղծանելոց են միւսանգամ. և ես ոչ եթէ այդու միայն ոչ պատրիմ, այլ և ոչ՝ եթէ զամենայն թագաւորութիւնդ քո ինձ տայիր՝ առնուի յանձն թուլանալ յայնմանէ, որ ճշմարիտ և հաստատութեամբ ունի[մ]։

Արքայ ասէ. Մի անարգեր և դարձուցաներ զպարգևդ որով պատուեցի զքեզ, եթէ կամիս կեալ դու և որ ընդ քեզդ են. ապա եթէ դարձեալ ի դին սատա-

Բ 100 բակութեան յամառեալ կայցես, որ ինչ ի մահ կայ՝ կատարեմ ի քեզ վաղվաղակի, և յաղեցուցանեմ զցասումն իմ ի քեզ և յամենայն ազգդ խաւտաբիրտ և սատամբակ։

48 B ընդ երդմանդ արեգական 56 B զահի հարցեն 67 B ի ձմերոց 67—68A ի ձմերոց արքայ ի Խուժաստան խաղաց ի Ղաբան քաղաք 72 A այ քեզա B այ լքեզա ուղղում համ հշտ—հշտ

74 AB և ոչ թողեք 90 A որ մաշի եւճաղկի 94 A պարտիմ

Պատասխանի ետ տէրն և ասէ. Եթէ տասըն ձիս
Աստուած յաւուրն յորում ամենայն ազգք և ազինք
յահ և յերկիւղ կացին առաջի նորա ի դատաստան,
թէ Ա՛յ անմիտ, ընդէր ոսկոյն՝ զոր ետու ես Շապհոյ
աղքայի՝ փոխանակեցեր զիս, և մոլորեցար զկնի ոչնչի,
և վասն ոչնչին ուրացար զիս, ես զի՞նչ տայց նմա պա-
տասխանի: Այլ զայս գիտացիր, աղքայ, զի ես գհաւա-
տս իմ հաստատուն ունիմ, և ի ճշմարտութենէս զոր
ունիմ՝ ոչ թուլանամ և դու, ամպարիշտ և անաւրէն,
կատարեա զչար ցանկութիւն սրտիդ, և ցոյց զսպանող
բարդ քո արդեամբ և մի՛ բանիւք:

Աղքայ ասէ. Ցայժմ իրրև խմաստուն ոք պատուե-
ցի զքեզ բանիւք և արդեամբք, բայց արդ գիտացի թէ
անմիտ ես և ի սոսմբակ ժողովրդնէն: Զի կակուղ բա-
նիդ խնդ ոչ անսայք, արդ և ես ցուցից միտս ստամ-
բակս և յորդորեցից սանձանս անհնարինս, որով գտա-
նիցէք վնաս:

Պատասխանի ետ տէրն Բարբաշմէն և ասէ. Մեք
ազգ խմաստուն եմք և ճշմարիտ, որ տուաք զանձինս
կամաւք ի մահ վասն ճշմարտին Աստուծոյ մերոյ, և
ոչինչ համարեցաք զամբար|տաւանութիւնդ քո մերով
արժանաւոր յամառութեամբս, որով ցուցաք զաշխար-
հէս, թէ անցաւոր է: Եւ քեզ ցուցաք, թէ չես միշտ
յաշխարհի: Դու աւադիկ սոխակ պատրես վաճառել
գծանրագին կեանս մեր ընդ թեթեւագին պարզևագդ,
և աղքատացուցանել զբազմապատիկ մեծութիւնս ոչըն-
չին պատուաւքն, որ անցանելոց են իրրև զաստուածան
քո:

Ապա ի ցասման մեծի եղեալ աղքայ՝ ասէ, թէ

107 B *ոսկոյն* A Շապըհու B Շապըհո 108 AB *ոչընչի* 109 AB *ոչընչին* 117 AB *ժողովըրդենեն* 127 B *սոխպես* 132 A և *ասե*

Ցայսմ աւրէ հետէ հրովարտակս գրեմ ընդ ամենայն
աշխարհս, առ զաւրագլուխս և առ զաւրավարս իմ,
135 թէ որ զանուն քրիստոնէութեան իշխեսցէ անուանել՝
սրով սատակեսցին, և հատցեն գլխովսկս նորա յերկրէ:

Պատասխանի ետ երանելին Բարբաշմէն և ասէ.
Մարտ պատերազմի մերոյ, զոր մարտնչիմք վասն Տեառն,
B 394v զաւրաւոր է քան|զմարտ զաւրացն քոյ, որ մարտնչին
140 վասն քո: Եւ առ այդ և՝ դի խրճեցեր սպառել զմեզ
սպանմամբ և անմարդի առնել սրով, ասացից. ահա ա-
ւաւել և աճեցուցանէ զմեզ սպանումն, և ապրք զազ-
գով եւևել առնեն սուրբքն մեր, և ոչ կարացեր դիմա-
կաց լինել զաւրութեան ապրիս մերոյ: Բայց դի ի զուր
145 և եմ ջանացար զկեանս մեր կորուսանել, հասան սահ-
մանք քո և յաւելան ի սահմանս մեր, և սիրեցին զմահն
մեր առաւել քան զկեանս քո: Եւ զի շաղախեցեր զձեռս
քո յարեան մերում, աշխատեսցիս լուանալ և ոչ լիցի
քեզ հնար: Այլ սպանելոքն սիրելիքն մեր, որ ի քէն
150 կոտորեցան, երթեալ վաւիլանան ի փառս Աղե-
նայ, և փողոտեալքն բարեկամքն մեր, որ ի քէն փողո-
տեցան, երթեալ զուարճանան ի վայելչութեան զրախ-
տին: Ցայգն, զոր հարեր գքարի, և կուսանքն, զոր
կոտորեցեր, ահա երթեալ լինին ուրախ յանսպառ յու-
155 րախութիւնս աբքայութեանն: Ըստ նոցա ուրախու-
թեանն և հանգստեանն պահեալ է քեզ հաշուոյ յա-
ւիտենական, լալ աչաց և կրճել ատամանց, յանսպառ
և յանկատարումն ժամանակս:

Իսկ ամպարիշտն և թշնամին արդարութեան ևս
առաւել բորբոքեցաւ ցասմամբ, եւևոյ զիմոյնս դառնու-

133 B *ի՛մ հետ* 134 A *աշխարհ* 138 AB *մարտընչիմք* 139 AB *մարտընչին* 150 B *կատարեցան* 152 B *ի վաելչու-թեան* 154 AB *յանըսպառ* B *ուրախութիւնս* 156 A *հան-գըստեանն* B *հանգըստեանն*

թեան, և ահեղ բանիւ հրաման ետ զամենեցուն դգլուխն հատանել, և տաբաժեաց զդառնութիւնն ընդ ամենեսա, վիրաւորեալ թոյնաւքն զաշխարհս ամենայն:

Քանզի գրեաց հրովարտակս, եթէ Որ զիս սիրէ և զթագս ի գլուխս կամի, փոյթ յանձին կալցի, զի քրիստոնեայ անուն ի տահմանի և յիշխանութեան նորա մի՛ գտցի, այլ երկիր պագցեն արեգական և պատուեսցեն զհուր և զջուր, և կերիցեն զարիւն: Եւ եթէ իցէ ոք, որ զայս ոչ առնիցէ, մահապարտեսցեն ի ձեռս մոգպետացս, և նոքա որպէս կամիցին, այնպէս չարչարեսցեն և կորուսցեն:

Պսակեցաւ սուրբն Բարբաշմէն վեշտասաներորդն որ վկայեցին ընդ նմա, որ էր ասն և ինն էր Քաղոց ամոյ ըստ Թուոյ լուսնոյ:

Դադարեաց առաջնորդութիւն յեկեղեցեացն Սղակայ և Ցիզբանի սակաւ ինչ աւելի քան զքսան ամ յահէ և յերկիւղէ խիստ հրամանին, որ յաղագս Քրիստոսի նահատակեցան՝ ի փառս և ի գովութիւն ամենազաւր տէրութեանն:

Որում վայելէ փառք իշխանութիւնն և պատիւ յաւիտեան յաւիտեան'':

165 B քրիստոսնեա 169 B մոգպետաց 170 B յիմ և կորուսցեն 173 A որ աւր ծ եւ ինն եր 174 B ամոս ըստ Թուո լուսնո

թ.

[A 454 B 394v]

ՎԿԱԲՈՒԹԻՒՆ ՎԿԱԲՈՑՆ, ՈՐ ՍՊԱՆԱՆ ՈՒՐԵՔ ՈՒՐԵՔ Ի ՁԵՌԱՑ ՄՈԳՊԵՏԱՑՆ, ԹՈՂ ՈՐ Ի ԴՐԱՆ ԱՐՔՈՒՆԻ ԿԱՏԱՐԵՑԱՆ:

Ի ժամանակին յորում պսակեցաւ սուրբն Բարբաշմէն՝ յարեաւ խռովութիւն անհնարին ի վերայ աշխարհին մերոյ, և նեղութիւն մեծ ի վերայ ժողովրդեանն Աստուծոյ. կործանումն եկեղեցեաց և եղծուածք սպասուց պաշտամանն: Եւ եղև սկիզբն շահի առաքինացաւ, և պակասութիւն կարաւտութեան լքելոցն: Որ անկանելոցն էին՝ անկան, և որ յառնելոցն էին՝ կանգնեցան: Ծրագրութիւքն վուԹացան զգործն արդեամբք կատարել, և վասքն կալ|ինալ ի խափանիչ դատարկութիւնն:

Սուրբն զաւրանայր, կոտորածն յաճախէր, դժոխք ծարաւի էին, Թէ երբ տեսցեն զբեկումն զաւրաւորացն և զպարտութիւն նահատակացն. ժողովեսցեն, ամիծ

B Վկաւութիւն վկաբէն որ սպանան ուրեք ուրեք ի ձեռաց մոգպետացն Թող որ ի դրան արքունի կատարեցան: 3 A ժողովըրդեան 5 B պաշտամանց B սկիսքն 6 B կարաւտութի՛ 7 A կանկնեցան B յիմ եւ որ յառնելոցն էին կանկնեցան 9 B յիմ եւ 11 B ո՛ քն զաւրանայր B այսեղից սկսած 9 տող կիսով B դժողք 13 A եւ զզրպարտութիւն B եւ զզրպարտութի՛

փեսացեն զգանձս նոցա և մեծասցին սատուարասցին մեծ
ծուլթեամբք նոցա, որ ունայն և թափուր ճնալոց են:
Կենարարն բարբառովն պարթուցանէր զնոսա իբրև
ի քաղցր քնոյ հանգստեան և զիշնամիան ահաբեկեր
սրտաթափն աղաղակաւ:
Բազում երանելիք ընդ ամենայն աշխարհ մեռան
մարտիրոսութեամբ, այնչափ պի ոչ զանուանս անգամ
կարացաք առնել ի գրի, բայց սակաւ ինչ ընդ թուով
արիաք վասն յիշատակի:
Ծթէ տարածեցից զբանս՝ չեն ձեռնհաս հասանել, և
եթէ երկայնեցից զպատգամն՝ չեմ բաւական կատարել:
Ծշանագիրքն կարճեցին, և նոցա նեղութիւնքն երկայ-
նաձիգք: Գարգքն փոքունք, և նոցա սանջանքն մեծա-
մեծք:
Անհնարին է երկայնել զբանս, պի ոչ ունիմ զդա-
տաստիճս նոցա ձանապարհն աչաց իմոց: Զէ մարթ ձգել
զձառս, պի ոչ ունիմ զչարչարանս նոցա ի շաւիղս մտաց
իմոց: Զունիմ զգանս նոցա ի գնացս ձեռին և ոչ գհար-
ցուածան և զպահանջանան յընթացս եղնգան: Դժուա-
րին է ասել, քանզի չիք ուրեք ի միջի մեկնութիւն.
անհնարին է պատմել, քանզի չերևի աւրինաւն որով
նկարեցից, և ոչ նպատակն առ ի նշանակել, յոր ձգե-
ցից և դիպեցուցից:
Գրեցից զմահս միայն նոցա, որ նա է մեծութիւն
նոցա, և զրոշմեցից զպսպանուածն, որ է նա նոցա փա-
ռաւորութիւն, պի նովաւ ելին ի գլուխ մարտին, և
A 454v նովին հանդիսին առաքինութեան|սպանուածն է պսակիչ,
և չեն ինչ պիտոյ բազում ձառք բանապարգք:

15 B նոցայ 17 A ահաբեկեսրտաթափին B ահաբեկսրտա-
թափին 20 B մարտիրոսութ՛ք AB անկամ 25 B նոցայ
26 B կարգն 29 B ճանապարք 31 A չունիմ զգանձս
նոցա գնացս ձեռին յիմ ի B գհարցուածս 32 A ընթացս
AB եղընգան 38 AB զբսպանուածն 40 AB առաքինութ-

Ո՞ կարացէ բաւանդակել ըստ արժանին, և կամ
ո՞ կշռել և համեմատել ըստ աւրինին: Դաշաք նոքաւք
զարդարեցան, մարգք նոքաւք ծաղկեցան. հեղան արիւնք
նոցա ի շէն և յաւեր տեղիս, և անկան ոսկերք նոցա
ի խորս և ի ձորս, և եղեն պահապանք յապականիչ
թշնամւոյ:
Քանի դառն էին չարչարանք նոցա, և քանի քաղցր
և անոյշ լուր համբաւոյ նոցա: Քանի ահագին էին
մահք նոցա, և քանի ցանկալի են խոստմունք յորդո-
րիչ պարգեւաց նոցա: Սպանուածն նոցա տապնապեալ
շտապէ, և յիշատակք նոցա ուրախ առնեն և զուար-
թացուցանեն: Զսրոյ և զչարչարանաց պատմեմք, և
զսպանմանէ և զկոտորածոյ ձառեմք: Ծկ հան յոգւոց
B 395v և արա արձակութիւն|հեղձամղձուկ մտացդ, եկ հանգո
զսիրտդ յալով և սգալով: Ծկ հանգո գյոյզս խորհրդոյդ
արտասուաւք: Ծկ զտես զաղտ ոգւոց չարչարանաւք և
լուա զսիրտդ սիրով: Ծկ լից զքո լուխդ ջրով, և արա զաչսդ
աղբերակունս արտասուաց. եկ պատրաստեա զականջդ
առ ի լսել, և զմիտդ առ իմանալ: Ծկ ընթերցիր զանթիւ անուանսդ, և ած զմտաւ զանթիւ նեղութիւնսդ,
և հաս անչափ տանջանացդ լուսթեամբ, զորս ոչ կա-
րացի պատմել, և ոչ յուշանել և յայտ առնել եղէ բա-
ւական:
Գրեցի թէ սպանան, և ձշմարիտ է. զրոշմեցի թէ
քարկոծեցան, և հաւատարիմ է: Քննեա, տես, որչափ
ինչ է չարչարանք նոցա, և զարմացիր, զմտաւ ած զկիր
արեան նոցա և սքանչացիր. արդեաւք [գոյ] գալ, տեսանել,
գիտել և ճանաչել զվտանգ տառապանաց քարկոծանաց

43 A ոյ 47 B թշնամո 53 A ըզսրոյ B զսրո 54 B հոգւոց
55 A հանկոյ B հանկո 56 A հանկոյ B հանկո 58 B զսկը-
տա AB զգւուխա 59 A պատրաստեայ 66 A քննեայ
68 AB արդեաւք քո գալ ուղղեցի՝ գոյ գալ, բայց անապահով:

70 նոցա, [գո՞յ] գալ և տեսանել վնեղութիւն պէսպէս
ահաւուց նոցա։

Մի՛ ընթեռնուլով միայն անցաներ և լռեր, այլ լից
զսիրտս քո չարչարանաւք և յուսով· լից զաչսդ քո ար-
տասուաւք և ցնծութեամբ՝ ի վերայ բանակայ կենդանի
75 մեռելոցն, ի վերայ զուարճացեալ գնդի սպանելոցն։
Սուգ ա՛ռ վասն մեկնելոյ նոցա ի միջ, և միխիթարեա
վասն խառնելոյ նոցա ի գունդն Քրիստոսի, զի ի միջ
արամութեանն և ուրախութեանն երկու շահս շա-
հեսցիս· մի, որով զմարմնդ լուասցես արտասուաւք·
80 և մի, որով զոգիդ նորոգեսցես ի յարութեանն· զի աստ
և անդ եղիցի քեզ յոյս և հանգիստ։ Այժմ և միշտ և
յաւիտեան յաւիտենից, ամէն։

70 B նոցայ AB քո գալ 72 B ընթռնլով B անցանել
75 B յի՛ զուարճացեալ 76 A մխիթարեայ 81 A այժմ
եւ միշտ եւ յ՚։

Ժ։

[A 447v B 388]

ՎԿԱՑՈՒԹԻՒՆ ՄԵԼԼՈՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՒ ԱԲՐԱՀԱ-ՄԱՑ ԵՐԻՑՈՒ ԵՒ ՍԻՆԵՒԻ ՍԱՐԿԱՒԱԳԻ Ի ՍԿԶԲԱՆԵՔ ՀԱԼԱՓԱՆԱՑ ՄԵՐՈՑ։

